

ԱՅՈՒՄԻ ԲԱՐՎՅՈՒՆ

ԱԲ

ԴԵՄԻ ԻՍՊԱՆԻԱ



891.995
Բ-33

ՊԵՏՂՐԱՏ

7

С 2114

30 MAY 2011

891.935 L30101 ԹԱՐԳՅՈՒԼ

թ-33

ԴԵՊՈ ԻՍՊԱՆԻԱ

(ՎԻՊԱԿ)

ՆԿԱՐՆԵՐԸ
Դ. ԳԵՏՐՈՍՅԱՆԻ

ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՅԵՍԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1939

ЛЮСИ ТАРГЮЛ
В ИСПАНИЮ
Դիշ, Արմ. ՍՍՐ, Երօստ, 1939 ր.



60388-67



ՂԵՊԻ ԻՍՊԱՆԻԱ

Այդ որն Արտոյի հայրը
տուն յեկավ շատ հուզված,
սովորականի պես յերեխա-
ներին չհամբուրեց, փոխա-
նակ ճաշելու, քաշվեց մի
անկյուն, գլուխը կախեց:

— Վայ, սրիկաներ, վայ,
— բացականչեց նա, զայ-

րույթից ձեռքը սեղանին խփելով:

— Այդ ո՞վ ե սրիկա, — հարցրեց տղան:

— Իսպանիայում քաղաքացիական կռիվ ե. խռովա-
բարները դուրս են յեկել հանրապետականների դեմ: Խռո-
վարարներին զենքով ու զորքով ոգնում ե Ֆաշիստական
Գերմանիան, Իտալիան, — պատասխանեց հայրը:

Արտոն աշխարհագրությունից գիտեր, վոր Իսպանիան
գտնվում ե Յեվրոպայում, հարուստ ե հանքերով, ժողովուր-
դըն զբաղվում ե գլխավորապես յերկրագործությամբ:

— Հայրիկ, իսկ ինչո՞ւ համար են Ֆաշիստական պե-
տություններն ոգնում խռովարարներին, — հետաքրքրվեց
Արտոն:

— Նրա համար, վոր ուզում են Իսպանիան իրենց
գաղութը դարձնել, տիրանալ նրա բնական հարստու-
թյուններին, բանվորական ուժին: Հանրապետականները չեն
ցանկանում իրենց անկախությունը կորցնել, չնայած....

— Ի՞նչ...

— Չնայած նրանց ռազմական միջոցները չնչին են ֆաշիստների դիմաց: Խռովարարները ուժեղացնում են նրանց քաղաքները. թափվում է կանանց, յերեխաների արյունը...

Արտոն գիշերը չկարողացավ քնել:

Նա պատկերացնում էր, թե ինչպես ոռոմբը մեռցնում է իսպանացի մանուկներին: Նրանց հայրերը, մայրերը ցավից մորմոքում էյին ու ավելի կատաղի կռվում:

— Մեր հողը չենք տա ձեզ:

— Չե՛նք տա...

Ու ճարճատում էյին գնդացիները ֆաշիստական:

— Գը՛ռ-գը՛ռ- գը՛ռ:

Ու պայթում էյին ոռոմբերը ֆաշիստական:

— Բո՛ւմ- բո՛ւմ-բո՛ւմ:

Այրվում էյին գյուղերն ու քաղաքները հանրապետականների: Դիակներ, դիակներ... վողջ մնացածները փախչում էյին սարերը:

Դիշեր: Տեղում էր անձրև: Համրաքայլ, գլխիկոր գեպի անտառ էր ընթանում գաղթականների մի ամբողջ խումբ: Ծերերը գրկել էյին մանուկներին: Մանուկները նվում էյին քաղցից:

Մո՛ւթ-մո՛ւթ էր: Ճանապարհն անսովոր, խորդ ու բորդ: Նրանց վտանները դեմ էյին առնում քարերի, ընկնում էյին ջրերի մեջ: Նրանք չեյին համարձակվում լուցկի վառել, թշնամու աչքը սուր է, կտեսնի:

— Ազատվեցինք, ազատվեցինք մահից, — ուրախացած շշնջացին նրանք տեղ հասնելով: Հանկարծ... հանկարծ ֆաշիստներն արձակեցին գազ...

Խեղդվեցին ծեր ու յերեխա, թռչունները դիակացած ընկան ծառերից...

Արտոն շատ հարուստ յերևակայություն ուներ: Նա չափազանց սիրում էր լսել պապիկին: Պապը դանազան հեքյաթներ էր պատմում:

— Հետո... հետո ի՛նչ յեղավ, պապի:

— Հետո նա նստեց հրեղեն ձին ու մի ըոպեյում Արաբստանից հասավ Հնդկաստան: Յերբ քաղցեց, մազը տվեց կրակին, իջավ աներևույթ սփռոցը, նա կերավ, կըշտացավ, սփռոցն ելի ծալվեց, չքացավ:

Ապա պատմում էր Պոնձե քաղաքի մասին, թե ինչպես վիռկը կախարդական գավազանի մի հարվածով արձան էր դարձրել բնակիչներին: Թե ինչպես Բաղդադի գողը, սև մորթու վրա նստած, թռչում էր ոգում... Նրան չեյին կարողանում բռնել, վորովհետև մորթը կախարդական էր, գողը դառնում էր անտեսանելի:

Արտոն լսում էր, լսում: Յերևակայությունից վառվում էյին աչքերը, ընդհատվում էր շնչառությունը... Հեքյաթների տպավորության տակ նա հեռանում էր տանից, յերեսն ի վայր պառկում խոտերի վրա, մտածում:

Յեթե ինքը վիռուկ լիներ, գավազանի մի հարվածով քար կդարձներ բոլոր կապիտալիստներին, կվերցնեք նրանց փողերը, կհեծներ հրեղեն ձին, մի ըոպեյում կհասներ Իսպանիա, կբաժաներ հաբստությունը սովատանջ գյուղացիներին, գործազուրկ բանվորներին ու կասեր.

— Կերեք, ուժեղացեք, վոր ավելի լավ կուվեք Ֆրանկոյի դեմ, ամբողջ Իսպանիան դարձրեք հանրապետական:

Հետո յել աներևույթ մորթի հագած կգար, կկտրեր Հիտլերի գլուխը, Մուսոլինիի գլուխը, ճապոնական զենքերայների գլուխը, մի խոսքով բոլոր ֆաշիստների գլուխները:

Իսկ յեթե լիներ կախարդակիսն սեղան, կմտներ բանտերը, կկերակրեր հեղափոխական կալանավորներին: Կկոտրեր յերկաթե պատուհանները, լայն-լայն կբանար դռներն ու կասեր.

— Դուքս յեկեք, դուքս յեկեք... Ազատութիւն եմ բերել ձեզ համար: Այ թե կուրախանար ընկեր Թելմանը, այ թե կսիրեր Արտոյին...

Հաճախ պատահում էր, վոր յերևակայութեան ամենաուժեղ րոպէյին խանգարում եյին ընկերները:

Նա բարկացած վեր եր թռչում, բայց դեռ յերազմեցից չսթափված, հրամայում էր:

— Քնք դարձեք, արձան դարձեք:

Ընկերները շփոթված նայում եյին իրար: Այդ րոպէյին նրանք իսկապէս քարացածի տպավորութիւն եյին թողնում: Արտոն, գործած ազդեցութիւնից վոգեվորված, քրքրւում էր, ապա միայն ուշքի գալով, զարմացած հարցնում.

— Ձեզ ի՞նչ է պատահել, վոր այդպես...

— Ինչ պատահել է, քիչ է պատահել,— հուզված ընդհատում եյին ընկերները:



ՊԱՂՏՆԻ ԽՕՐՀՐԱՍԿՈՒԹՅՈՒՆ

Հաջորդ որն Արտոն զսրտոց զնաց չափազանց մտազբաղ: Ընկերների հետ խոսում էր, բայց մտածում այլ բանի մասին, դաս պատասխանելիս ել այլ բանի մասին էր մտածում:

— Գնալ Իսպանիա, ոգնել հանրապետականներին:

Հասարակագիտութեան ժամին այդ միտքն ավելի սրվեց: Ուսուցչի վրա ել շատ էր ազդել այդ կռիվը: Նա գաղութային քաղաքականութեան մասին էր խոսում:

— Առաջ Անդրկովկասն ել գաղութ էր ցարական Ռուսաստանի ձեռքին: Ժնշումն առաջացրեց ատելութիւն, ատելութիւնը՝ պայքար: Վոտքի յելան հայերը, աղբբեջանցիները, վրացիք, աշարները, արխազները: Միջին Ասիայում թուրքմենները, ուզբեկները, ղազախները. ապստամբեցին բոլոր մանր ազգերը, և մեծ Ռուսաստանի աշխատավորութեան ոժանդակութեամբ ցարիզմը կործանեցին:

— Մեր հողը մերն է, մեր վաստակը մերն է,— ասացին:

Արտոն վոգեվորված ծափահարեց, ապա լուրջ հարցրեց.

— Ընկեր Ավետիսյան, հանրապետականներն ել այդպէս չէ՞ն անի:

Ուսուցիչը դեռ չէր պատասխանել, յերբ Գուրգենն անհանգիստ ձայնեց.

— Ընկեր Ավետիսյան, ճիշտ է, խռովարարները ռազմական միջոցներ շատ ունեն, բայց չի կարող պատահել, վոր հանրապետականները հաղթեն:

Արտոն իսկույն նայեց ընկերոջը:

Նա հասկացավ, վոր ընկերն էլ չի սիրում Փաշիստներին: Յեթե այդպես է, արդյոք չե՞ր համաձայնվի միասին գնալ Իսպանիա:

Ասենք Գուրգենը բավականին վախկոտ է, բայց վոչինչ, յերկուսով ճանապարհորդությունը հետաքրքրական կլինի, ոգնությունն ավելի մեծ կլինի:

Ուսուցիչն ասաց, վոր դեռ դժվար է գուշակել, թե վոր կողմն է հաղթող հանդիսանալու: Թեև խռովարարները գենքով շատ են հարուստ, քանի վոր նրանց ոգնում է Փաշիստական Իտալիան, Գերմանիան, սակայն հանրապետականներն ինքնապաշտպանության մեծ վողի ունեն, կռվում են նաև կանայք, աղջիկները:

— Ընկեր Ավետիսյան, հանրապետականները կարմիր բույրեր ունեն, վոր միրավորների վերքերը կապեն,— ընդհատեց Շուշիկը:

Արտոն լայնացած աչքերով նայեց Շուշիկին: Չլինի՞ նա էլ եր ուզում Իսպանիա գնալ... Այ, թե լավ կլիներ յերեքով... Շուշիկը կլիներ կարմիր քուլրիկ, Գուրգենը կլրտեսեր թշնամու թիկունքը, ինքը հաց ու ջուր կտաներ հանրապետականներին, կկռվեր նրանց հետ միասին...

Ահա: Քարերի միջից փորսող տալով սար է բարձրանում: Թշնամին նկատում է նրան: Հարյուրավոր գնդակ է արձակում: Գնդակները դիպչում են իրեն և յետ դառնում: Գնդակը չի ուզում սպանել այդպիսի լավ տղային: Չե՞ վոր նա ուտելիք է հասցնում մարտիկներին: Յեթե նա չողնի, նրանք կմեռնեն քաղցից, լաց կլինեն նրանց մայրերը, յերեխաները...

— Ընկեր Ավետիսյան, Արտոն քնել է,— հայտնեց մեկը,— գլուխը դրել է սեղանին ու քնել:

— Յես չեմ քնել, մտածում եմ.— սթափվեց Արտոն:

— Ինչի՞ մասին:

— Վոչինչի...

— Ի՞նչ է պատահել, շատ ցրված ես յերևում այսօր,— հարցրեց ուսուցիչը,— հապա, դասդ պատմիր:

Արտոն կանգնեց: Սակայն փոխանակ պատասխանելու, ինքն էլ չզգաց, թե ինչպես հարցրեց.

— Ինչպե՞ս կարելի յե Իսպանիա հասնել...

Շուշիկն ու Գուրգենը զսպանակի պես վեր թռան, կարծես նստած տեղից չե՞ր կարելի բացատրությունը լսել:

— Հարկավոր է Բաթումիից նստել շոգենավ, անցնել Սև ծովը, Միջերկրականը, Սուեզի ջրանցքը,— հետո... դրա մասին հետո, նկատեց ուսուցիչը, այժմ հասարակագիտության ժամ է, ինչո՞ւ յեք կողմնակի հարցերով զբաղվում:

Յերեկոյան, առանց նախորդ պայմանավորվելու, հավաքվեցին ընկերները: Նրանք խոսեցին դեսից-դենից, սակայն վոչ-վոք սիրտ չարավ իրենց անհանգստացնող խնդրի մասին առաջինը խոսել: Մեկին պարզվեց, վոր մյուսները վոչ միայն չեյին վորոշել Իսպանիա գնալ, այլ մտքով անգամ չեյին անցկացրել: Այն ժամանակ պիտի բացվեր մեկի զազանիքը և մյուսները պիտի ծիծաղեյին նրա վրա:

— Ճիշտ ասացեք, ինչի՞ համար եք յեկել ինձ մոտ, — խորամանկորեն հարցրեց Արտոն, բայց, առանց պատասխանի սպասելու, ինքն էլ չզգաց, թե ինչպես հայտարարեց.

— Յես գնում եմ Իսպանիա: Ո՞վ է ինձ հետ...

— Ներողություն, յես քեզանից շուտ եմ վճռել,— ընդհատեց Գուրգենը: — Յեթե ուզում եք միանալ ինձ, խնդրեմ, շատ ուրախ կլինեմ:

— Յեթե դուք այսօր եք մտածել դրա մասին, յես

յերեկվանից եմ վորոշել, — նկատեց Շուշիկը: — Յես մինչե անգամ հետս տանելու անհրաժեշտ իրերը կառել եմ: Այնպես վոր, յեթե ուզում եք, կարող եք ընկերանալ:

Արտոն վիրավորված կախեց գլուխը: Ինքը չքնի ամբողջ գիշերը, ինքը մտածի ամբողջ ցերեկը Իսպանիա գրնալու մասին մի ամբողջ նախագիծ կազմի և հանկարծ, ինչ վոր Շուշիկ կամ Գուրգեն ասեն, «Յեթե ուզում ես, կարող ես մեզ հետ գալ»...

— Դուք գնում եք, գնացեք, — կոպիտ կերպով ասաց նա, — յես Իսպանիա չեմ գնում:

— Ի՞նչպես թե, — վրդովեցին ընկերները, — բա ասում եյիր...

— Ձեզ խաբելու համար ասացի:

Շուշիկի խոշոր աչքերը զարմանքից ավելի մեծացան:

— Արտո, իսկապես չե՞ս գա:

— Վո՛չ:

— Իսկ յեթե յես գնամ, չե՞ս մատնի ծնողներիս:

— Կմատնեմ:

Շուշիկը մտածեց, ապա թույլ շշնջաց.

— Յես ել չեմ գնա Իսպանիա... Միայն ձեզ զարմացնելու համար ասացի:

— Իսկ յես, հո զիտեք, վախկոտ եմ: Ինչպե՞ս կարող եմ Իսպանիա հասնել:

— Միայն ձեզ ծիծաղեցնելու համար ասացի, — խստեց Գուրգենը:

— Ուրեմն չե՞ք գնա, — խրոխտ հարցրեց Արտոն:

— Ձե, չե, ազնիվ խոսք...

— Իսկ յես կգնամ:

Ընկերները շփոթված բացականչեցին.

— Բա ասում եյիր...

Արտոն նրանց անվտանգ դեմքերին նայելով, ավելի համարձակ հայտարարեց.

— Հենց այս գիշեր յես ճանապարհ եմ ընկնելու:



Հարկավոր ե ոգնել հանրապետականներին: Յեա կարող եմ
ձեզ ինձ հետ վերցնել. յեթե կամենամ...

— Լուրջ ես խոսում:

— Ազնիվ պիտներական խոսք:

— Մենք ել գանք քեզ հետ:

— Կարելի յե...

Շուշիկն ու Գուրգենն ուրախացած գրկեցին Արտոյին,
սալա նստեցին խորհրդակցության:

Վորոշվեց գիշերը, հենց վոր ծնողները քնեն, Արտոն
դուրս գա տանից, ձայն տա նրանց: Դրա համար հար-
կավոր եր բաց թողնել պատուհանը. լարել լսողությունը:
Պայմանական նշանը լինելու յե «կու-կոկ»:

Յերկրորդ վորոշումն եր վերցնել փող ե ուտելիք:

— Իմ հայրը բժիշկ ե, նա վիրակապ ու յող շատ ունի:
Ճիշտ ե, չի սիրում, յերբ առանց թույլտվության խառ-
նում են նրա պահարանը, բայց այս անգամ կարելի յե:
Ախր նա պիտի հպսկանա, վոր հանրապետականների վեր-
քերը կապելու համար դեզ ե պետք: Այդպես չէ,—հարց-
բեց Շուշիկը:

— Իհարկե այդպես ե,—խրախուսեցին ընկերները:

— Իսկ յես... յես կվերցնեմ հորս ատրճանակը,—հա-
զիվ լսելի շնչաց Արտոն:—Թեև հայրիկս չի թողնում վոր
ատրճանակին ձեռք տանք, բայց նա պիտի հասկանա, վոր
առանց դրան չի կարելի շարքել ֆաշիստներին:

— Միանգամայն ճիշտ ե,—համաձայնվեցին ընկերները:

Հակառակի պես այդ յերեկո հայրերը շատ ուշ վե-
րադարձան, յերեխաները տանջվում էին անհամբերությու-
նից: Կապել էին հացը, վերցրել սալոնն, ատամի փոշի, իսկ
ամենակարևորը՝ ատրճանակը մնում եր:

Շուշիկը պատրաստել եր դեզ, վիրակապ, սպասում
եր, վոր Արտոն կանչեր. «կու-կոկ»:

— Լույսը հանգցրու, քնիր,—ասաց մայրը:

— Յեա հայրիկին եմ սպասում, ուզում եմ, վոր թվա-
բանական խնդիրներս ստուգի,—թոթովեց Շուշիկը:

— Նա այսօր շատ ուշ ե գալու, գյուղերն ե գնացել:
Վեր:

— Քուռս չի տանում:

— Ի՞նչ ե պատահել,—անհանգստացավ մայրը:

— Ի՞նչ պիտի պատահի վոր...

Նա դիտմամբ նայում եր առաստաղին, վոր քուռը չը-
տաներ:

— Կու-կոկ, դէհ, շուտ կանչիր, ելի...

— Ա՛յ Գուրգեն, ժամի տասերիունն ե արդեն, պառ-
կիր, վոր առավոտը շուտ վեր կենաս, դպրոցից չուշա-
նաս,—համոզում եր մայրը:

— Դու յես ամբողջ օրը լվացք արել, քեզ ե հարկա-
վոր հանգստանալ: Դու քնիր, յես ես ե, կպառկեմ, ազնիվ
խոսք, կպառկեմ,—հավատացնում եր տղան:

— Դէ, վեր, վեր: Ուրիշ ժամանակ տասին եյիր պառ-
կում, այսօր ի՞նչ ե պատահել:

— Ի՞նչ պիտի լինի... Հենց այնպես սպասում եմ, վոր
հայրիկը գա, դուռը բաց անեմ:

— Նա բանալի ունի: Քնիր:

Քնիր: Յեթե Գուրգենը քնի, բա հվ ճանապարհ ընկ-
նի գիշերով:

— Չէս լսում, այ տղա:

Գուրգենն զգաց, վոր մօր ձեռքից հեշտ չեր ագատվելը:
Ստիպված հանգցրեց լույսը, մոտեցավ անկողնուն:

Պապիկը քնեց, զարթնեց, ելի քնեց, զարթնեց, իսկ թոռնիկը նստել եր դեռ:

— Արտո ջան, ժամի մեկը խփեց, քնիր:

— Դաս եմ սովորում, պապի:

— Գիշերով շատ վոր կարդաս, աչքերդ կցավի:

— Վոչինչ... Բա դու, ինչո՞ւ չես քնում,—մեղմ խոսակցությունից մեկեն հարձակողականի անցավ Արտոն:

Նրան հուզում եր պապիկի արթուն լինելը: Ուրիշ ժամանակ խումփոցը կզցեր և թեկուզ թմբուկ զարկեյիր ականջի տակ, չեր լսի...

Այսօր ամեն ինչ հակառակն ե. պապը չի քնում, հայրիկը չի գալիս:

— Պապի, յես լույսը հանգցնում եմ, վոր քնեմ, ինձ ել չխոսեցնես. ա՛յ...—զայրույթը հագիլ զսպելով ասաց նա:

Քիչ հետո հայրիկը յեկավ, նա չափազանց հոգնած եր յերևում, առանց ընթրելու պառկեց և մի քանի ըուպե չանցած, լավեց նրա խաղաղ շնչառությունը:

Արտոն կառավի զգուշությամբ իջավ մահճակալից, թաթերի վրա մոտեցավ հորը:

Նա շատ լավ գիտեր, վոր հայրը պառկելիս, ատրճառակը պահում եր բարձի տակ: Մթության մեջ խարխափելով, նա շոշափեց հոր անկողինը, բարձը և ձեռքը դիպավ ինչ վոր սառը բանի... Նա և՛ վախեցավ և՛ դողաց հրճվանքից:


Չերևալու համար պզգեց հատակին ու կամաց-կամաց քաշեց ատրճառակի գոտին: Նա մեկ շնչում եր, մեկ շունչը պահած ականջ դնում հոր շնչառությանը:

Չէ: Ամեն ինչ լավ եր ընթանում: Վոզեվորված նա այնպես ամուր ձգեց, վոր ատրճառակն ընկավ հատակին:

Աղմուկի վրա հայրը գլուխը բարձրացրեց: Արտոն ատրճառակը գրկած վախից սողաց մահճակալի տակ: Հայրը կիսաքուն ինչ վոր փնթփնթաց, ելի պառկեց: Տղան զգու-

շության համար դեռ դուրս չեկավ: Նա սպասում եր, վոր հայրը նորից քնի: Շտապելու կարիք չկար: Ամենակարե-վորն այն եր, վոր արդեն ատրճառակը վերցրել եր:

— Դէհ, ֆաշիստներ, ձեռներդ հեռու հանրապետականներից,—ուրախ մտածեց նա, բայց հանկարծ ընկավ տրամադրությունը... Բա վոր հայրը զարթնելիս ատրճառակը չգտներ... Բա վոր դրա համար կուսակցությունից նկատողություն ստանար...—Չէ, չի կարելի հայրիկի ատրճառակը վերցնել, իր վարձուքը դատապարտեց Արտոն.— ա-վելի լավ ե պապիկիս գաշույնը վերցնեմ, պապիկս ծեր ե. նրան ել ինչի՞ն ե պետք, մեկ ել դրա համար նրան վոչ վոք նկատողություն չի անի...



“ՀՐԵՂԵՆ ՁԻՆ”

...Ու նրանք ճանապարհ ընկան...

Քնել եյին մեծերը, քնել եյին փոքրերը: Փողոցներում վոշ վոք չկար, բացի յերեք հերոսներից: Նրանք և՛ քայլում եյին, և՛ շշուկ անելուն պես գլուխները կախում, վոր չլինի թե ծանոթ մարդ դուրս գար, ճանաչեր իրենց:

Յերը քաղաքը մնաց սարի կռնակին, նրանք նոր հանգիստ շնչեցին, սակայն կարմիր քույրիկը հոգնել էր արդեն...

Գուրգենը մտածում էր, թե ինչ կասեյին ծնողները, յեթե նրան անկողնում չտեսնեյին: Նույնը խորհում էր նաև Արտոն, բայց դիմամբ այդ մասին չէր խոսում:

— Տղերք, հո չեք հոգնել,— լուսնունը խզելու համար հարցրեց նա:

— Ձե, չե, ի՞նչ ես տալում... Ինձ թվում է, թե դեռ նոր եմ դուրս յեկել տանից,— նկատեց Շուշիկը, վտտները հագիվ-հագ քաշ տալով:

— Յեթե հոգնել եք, մի քիչ նստենք,— առաջարկեց Գուրգենը:

— Ուրախությամբ, մեծ, մեծ ուրախությամբ,— իսկույն համաձայնվեց Շուշիկը:

Գիշերը լուսնկա յեր, յերկինքը պայծառ: Ծառերը յերկար ստվերներ եյին գցել: Այնպես խաղաղ էր շուրջը, ծաղիկների բուրմունքից ողն այնպես խտացած էր, վոր յերեխաների աչքերը փակվում եյին... Քնել, թեկուզ հինգ րոպե, յերկու րոպե: Բայց վնչ, չեր կարելի, րոպեն կարող էր ժամ դառնալ, ժամը՝ ժամեր, մինչդեռ շարժվել էր պետք:

Չորում խշշում էր գետակը: Նա մերթ ցույց էր տալիս իր արծաթյա գոտին, մերթ ոճի նման գալարվում դեպի ժայռերի յետեր:

Շուշիկի մատները դուրս եյին ընկել ծակ կոշիկներից, շփովելուց նորերի փոխարեն հագել էր հները: Ծանապարհին և՛ քար և՛ փուշ, արնոտել եյին խեղճի վտտները:

Նա ուզում էր լալ... Աչքերն արդեն լցվել եյին, մեծ դժվարությամբ էր զսպում իրեն, վոր ընկերները չնկատեն:

— Արտո, ճիշտն ասա, դեռ շատ կա մինչև կանաչ դաշտերը:

— Եհն, մեր կարմիր քույրիկը լաց է լինում,— հիասթափվեցին տղաները:

— Յես լաց չեմ լինում,— կարմրեց Շուշիկը,— յերը շատ եմ ման գալիս, աչքերս արցունքով լցվում են:

— Դա շատ հիմար սովորություն է,— նկատեց Գուրգենը:

— Գուցե ուզում ես յեա դառնալ,— խորամանկորեն ձայնեց Արտոն:

Շուշիկը սարսափած փաթաթվեց նրան:

— Գիժ, յես հոգնածությունիցս եմ լալիս:

— Բա այդպես պիտի Իսպանիա հասնես:

— Գիժ, յես ցրտիցն եմ լալիս,— ավելի խճճվեց աղջիկը:

— Ցուրտ,— բա այդպես պիտի պաշտպանես հանրապետականներին,— նախատեցին տղաները:



Շուշիկը ճիգ արավ և արցունքների միջից ծիծաղեց:

— Գիժ, յես Իսպանիա գնալու ուրախությունից եմ լալիս:

Մութը քաշվեց, լուսացավ: Զարթնեցին մարդիկ, քնեցին մեր հերոսները: Միջավայրն ոտար եր, ծանոթի հանդիպելու վախ չկար:

Յերագույն նրանք տեսան ծնողներին, այնպես տխուր էյին մայրերը... Հայրերը հուզված զանգահարում էյին միլիցիա. փնտռում էյին կորած յերեխաներին:

Ախր չգիտեյին, չգիտեյին ծնողները, թե ինչպես էյին կանչում իրենց իսպանացի մանուկները:

— Յեկեք, շուտ-շուտ յեկեք...

Արտոն վոչ միայն լսում եր նրանց կանչը, այլև տեսնում, այո, տեսնում եր, թե ինչպես լացակուժած մանկիկները պարզել էյին իրենց թաթիկները:

— Գալիս ենք, գալիս,—զգացված բացականչեց ու ապա ընկերներին ասաց.

— Նստե՛ք, մի-մի յերկտող գրենք մեր ծնողներին,—առաջարկեց Արտոն:

Նրանք գրպաններից հանեցին թուղթ, մատիտ, գրեցին: Վերջացնելուց հետո հանգիստ սրտով շարունակեցին ճանապարհը:

Զորում հոսում եր մի գետ:

— Կամուրջը փնտռենք,—ասաց Գուրգենը:

— Շատ ժամանակ կանցնի,—հաղառակեց Արտոն:

— Բա ի՞նչ անենք:

— Լողալով անցնենք:

Կարմիր քույրիկն այնպես խեղճացած նայեց տղաներին, վոր նրանք անմիջապես հարցրին:

— Դու լողալ չգիտե՞ս:

— Վո՛չ:

— Բա ինչո՞ւ մինչև հիմա չես սովորել:

Շուշիկը դեռ չեր պատասխանել, յերբ Արտոն տեսավ, վոր կանաչների մեջ արածում ե մի ձի, խոտերի մեջ պառկած քնել եր տերը: Զգուշության համար ձիու պարանդ կապել եր ձեռքից: Տիրոջ բերանը բաց եր, ճանձերը համարյա յելեվելում էյին:

— Ի՞նչ եք կարծում, լավ չի՞ լինի, յեթե այդ ձին նրստենք ու գետն անցնենք,—ըշնաց Արտոն:

Շուշիկն իր կյանքում դեռ ձի չեր նստել: Նա սպրբանեց, բայց վախը ցույց չտալու համար, ասաց:

— Իհարկե վատ չի լինի... Մակայն տերը կարող ե չհամաձայնվել: «Յերանի չհամաձայնվի»,—ավելացրեց նա մտքում:

— Մենք տիրոջը չենք հարցնի, ի՞նչ վատ բան ենք անում, վոր...—Պոսեց Գուրգենը, դանակով կկտրենք ձիու պարանդ, իսկ տիրոջ ձեռքին կղնենք մի յերկտող:

Այդ միտքը չափազանց դուր յեկավ Արտոյին, նա ընկերներին առաջարկեց գնալ գետափ, իսկ ինքը գրեց.

«Պապի ջան.

Կարճ ժամանակով վերցնում ենք ձեր ձին, կհեծնենք, դուրս կգանք մյուս ափը և հետ կուղարկենք: Զարթնելիս մեզ չհայհոյես, մենք լավ բալիկներ ենք:

Այ պապի, սրանից հետո վոր քնես, բերանդ փակ պահի, թե չե ճանձերը մտնում են՝ յելնում, ախր նրանք կեղտոտ են, հիվանդություն են տարածում... Դեհ, առայժմ ցանկանում ենք քեզ ավելի խոր քուն...»

Մի խումբ ճանապարհորդներ:

Նա յերկտողը խնամքով ծալեց, դրեց գլուղացու դեմքի վրա, ապա ձին կամաց-կամաց դաշտից հանեց:

Յերբ նա արդեն բավականին հեռացել էր, ցատկեց ձիու վրա և չորքոտանուն մի պահ հրեզեն ձի յերևաղայելով, իսկ իրեն՝ Սասունցի Դավիթ, մտրակը ճոճեց։

Սակայն ձին վոչ միայն հրեզեն չէր, այլ և կույր... ու կադ...

Արտոն հիասթափված գլուխն ուրրեց։ Յերբ մոտեցավ ընկերներին՝ Շուշիկի սիրտը թալրտաց...

Չնայած նա ժպտում էր, սակայն տղաները շատ լավ հասկացան նրա վախը։ Նրանք հեծան, ապահովության համար կարմիր քույրիկին նստեցրին մեջտեղ ու ձին քշեցին դեպի գետը։

— Դեհ, կույր և կադ, քեզ տեսներք,— անվստահ բացականչեց Արտոն։

Ձին մտավ գետը։ Յերեսաները սիրտ առան, Շուշիկը մինչև անգամ ծիծաղեց։

— Դեհ, դեհ,— խրախուսեցին մեր հերոսներն ու յերեք դույզ վտար չափով զարնվեց ձիու կողերին։

Ձին գնաց, գնաց, հանկարծ յերերաց։

Շուշիկը վախից ամուր գրկեց Արտոյին, Գուրգենը կախվեց չորքոտանու պոչից։ Արտոն մի կողմից ընկերուհուն բռնած, մյուս կողմից սանձը, աշխատեց հավասարակշռությունը չկորցնել։

— Դեհ, դեհ...

Ձին ուղղվեց, մի քանի քայլ արավ, նորից սայթաքեց և այս անգամ վերջնականապես նստեց գետի մեջտեղը։

Այլքներն ըռպեյապես շրջեցին մեր հերոսներին։ Արտոն սքանչելի լողալ գիտեր, նրանից յետ չէր մնում Գուրգենը, իսկ ուր էր, ուր՝ ուր կարմիր քույրիկը...

— Չլինի՞ ձիու տակն և մնացել,— սարսափած հարցրին տղաները։

Չկար։

Նրանք զայրույթից ուժեղ հարված տվին անպիտան ձիու չոր կողերին։ Չորքոտանին կանգնեց, դեպի յետ լողաց։

Ռւրիշ ժամանակ լիներ, յերեսաներն անպայման կը ծիծաղեյին այդ կենդանու վրա, բայց հիմա այդ չէր հետաքրքրողը։ Հարկավոր էր փրկել ընկերուհուն։

— Շուշիկ, վճռեղ ես...

— Ա՛յստեղ եմ... խեղդվում եմ,— լսվեց թույլ պատասխան։

Տղաները սրտատրոփ լողացին դեպի աջ, չգտան։ Լողացին դեպի ձախ, չգտան։ Բռնեցին ինչ վոր բան, ձկնորսի գզգզված ուռկան էր...

— Շուշիկ...

Այս անգամ արձագանքող չեղավ։ Վորոշ տարածության վրա ջրի յերեսին պղպղակներ յերևացին։

— Այնտեղ կլինի,— գուշակեց Արտոն։

— Ձեռք եմ բռնել,— բացականչեց Գուրգենը։

— Իսկ յետ՝ վտար։

Ու քաշեցին, քաշեցին, քաշեցին, Շուշիկի տեղ սառած դիակ հանեցին...

— Խեղդվել է,— ալլալվեց մեկը։

— Ուշաթափված կլինի,— յենթադրեց մյուսը,— կախենք, թող ջուրը թափվի։

Այդ միտքն ուժ տվեց նրանց։ Բարձրացրին, գլուխն ի վայր կախեցին կարմիր քույրիկին, սկսեցին ճոճել։

Ինչպես ծանրացել էր նա, այդ բարակիկ, փխրուն աղջիկը։ Ջուրը ջրվեժի պես էր գահավիժում նրա բերանից։

— Այդ յե՛րբ ամբողջ գետը խմեց,— ահամա ծիծաղեց Արտոն։ Ապա պառկեցրին նրան, շփեցին մարմինը։

— Ամուր. ամուր, մի վախենա,— վոզեվորվեց Գուրգենը։

— Ես ո՞վ ե իմ մաշկը քերթում... Ինչի՞ համար եք քերթում,— թույլ ձայնով բողոքեց Շուշիկը։

— Վա՛յ, կենդանի յե, կենդանի,— ուրախությունից վստաստեցին տղաները։

Շուշիկը նայեց ընկերներին: Նրանց սարսափը թեև անցել էր, սակայն դեռ գունատ էյին: Յերևում էր, վոր շատ էյին տանջվել իրեն փրկելու համար: Նա ժպտաց, ապա մռայլվեց: Լավ չեղավ: Դրանից հետո տղաները նրան թույլ տեղ պիտի դնեյին... Հարկավոր էր մի կերպ պաշտպանվել:

— Դուք կարծում էյիք յես ուշաթափվել էյի... Իսկի յել չե, քնել էյի,—ասաց նա՝ դեմքը ծածկելով:

— Կարող ե պատահել... Ի՞նչ կա, կարող ե պատահել,—պատասխանեցին ընկերները:—Ձուկն էլ ե ջրի մեջ քնում... Բայց դու սրանից հետո մայրիկիդ ասա, վոր քեզ թողնի լողալ սովորես, թե չե, մի անգամ էլ վոր այդպես քնես, էլ դժվար թե զարթնես...

Շուշիկը խոսակցության նյութը փոխելու համար, ասաց, վոր քաղցած է, քաղց զգացին և տղաները: Առաջվեց պատահած անախորժությունը:

— Դուք նստեք, խնդրում եմ նստեք, հիմա յես եմ ուզում ձեզ ոգտակար լինել,—աշխուժ նկատեց կարմիր քույրիկը, մեջտեղ բերելով մթերքի կապոցը:

— Դեհ, սկսե՛ք:

Ուտել... Բայց ի՞նչ ուտել... Շաքարը հալել էր, աղը թափվել էր, տվել հացին: Հացը դարձել էր տարորինակ գույնի խմոր: Խմոր լինելը բավական չեր, հետը միացել էր ատամի փոշին:

Տղաները դառնացած նայեցին իրար:

— Ճիշտն ասած, յես անորժակ չունեմ,—ասաց Դուրգենը:

— Իսկ յես այնպես կուշտ եմ, վոր կարծես նոր եմ ճաշել,—նկատեց Արտոն:

— Լավ, վոր ուտել չեք ուզում, թափեմ: Հարկավոր ե կապոցը լվալ, չորացնել,—ասաց Շուշիկը:

— Մի տանի,—սարսափած կանխեցին ընկերները,—թող մնա, հենց այնպես թող մնա...

— Ինչպես յես ջրում քնել էյի, այնպես էլ դուք եք կուշտ,—զվարթ քրքջաց աղջիկը, մատը տղաների վրա թափահարելով:—Յեթե աղը տվել ե հացին, իմ կարծիքով դա փաստակար չե, շատ-շատ պիտի քիչ ավելի ջուր խմենք: Յեթե հացի հետ խառնվել ե ատամի փոշի, դա էլ փաստակար չե, ընդհանրապես, մինչև անգամ հետաքրքրական ե ուտամի փոշոտ հաց ուտելը: Փոխանակ ուտելուց հետո մաքրելու ատամները, մենք միաժամանակ կկատարենք այդ աշխատանքը... Յեթե ուզում եք, առաջինը յես կսկսեմ,—համարձակ նկատեց Շուշիկը՝ բժշկի աղջիկը, ու խմոր հացից մի կտոր վերցնելով, բերանը տարավ:

Նա այնպիսի անորժակով կուլ տվեց պատառը և այնպիսի ազահուլժյամբ ձեռքը նորից պարզեց սփռոցին, վոր տղաները չդիմացան:

— Կարծես ամենևին էլ աղի չի,—ասաց Արտոն հացը ծամելով:


— Վոչ էլ փոշոտ...—ավելացրեց Գուրգենը:

— Իհարկե, չե,—հաստատեց Շուշիկը:

Նրանք մեծ հաճույքով նախաճաշեցին ու գտան, վոր իրենց կյանքում այդպիսի համով հաց դեռ չեյին կերել:

Ուտելուց հետո պառկեցին ու մի լավ քնեցին:

Չարթնելուց հետո ասացին, վոր իրենց կյանքում այդպիսի հանգիստ անկողին և խոր քուն դեռ չեյին զգացել:



ԲԱՆԱԿՆ ԱՅՈՒՄ Ե

«Հաճելի» նախա-
ճաշից ու սքանչելի
քնից հետո, նրանց
տրամադրու թյունը
բարձրացավ: Ճա-
նապարհը շարունա-
կեցին:

Արտոն այնպես
փոգեփորված պատ-
մում էր Սասունցի

Դավթի մասին, փոր ընկերներն ամենևին չնկատեցին, թե
ինչպես իջավ մութը և ինչ փոր շներ կատաղի հաջողով
նրանց դեմ յեկան:

Շուշիկն ահից կծկվեց, բայց ծպտուն չհանեց... Յեթե
շունը նրան գզգզեր ել, միևնույն է, լուռ պիտի մնար:
Հերիք, ինչքան աղաները ծաղրեցին նրա վախկոտությունը:

Ճանապարհորդները նկատեցին մի տուն: Շենքն ու-
ներ յերկաթապատ պատուհաններ: Դռան մոտ կանգնել էր
միլիցիոներ:

— Անպայման բանտ է, — յեզրակացրեց Արտոն, — յեթե
մեզ նկատեն, լավ չի: Յեթե մեզ մոտ գենը գտնեն, ավե-
լի վատ: Միլիցիոնների աչքը սուր է, այդպիսի բան շուտ
կտեսնի... Յեթե չասենք փորտեղ ենք գնում, մեզ կբռն-
են, յեթե խոստովանենք, յետ կուղարկեն: Հարկավոր է
ճանապարհից շեղվել:

Յեվ նրանք կուղե-կուղ անտառ մտան:

Չնայած պարզ յերկնակամարի վրա ուրախ թարթում
էին աստղերը, բայց անտառում մութ էր: Յերեխաները
հազիվ էին նշմարում շավիղը:

Նրանք խարխափելով քայլում էին, յերբ ինչ-փոր
շուկ լավեց: Դիտեցին շուրջը, փոշին չտեսան: Քաջաբե-
րված մի քանի քալ առաջ գնացին, նորից շուկ լսեցին:
Այս անգամ արդեն փորոշակի, մարդկային ձայն:

Դուցե ավազակ էր անտառում, չար մարդ...

Նրանք պահվեցին ծառերի յետևում: Արտոն բնագ-
դաբար ձեռքը տարավ դաշույնին:

— Ասլան, կարծես մարդ լինի անտառում, — լավեց
անհամարձակ մի ձայն:

— Ինչպես յերևում է նրանք ել մեզնից են վախե-
նում, — խրախուսեց Դուրգենը:

— Սըբ սաս, մոտենում են...

— Ասլան, դանակդ պատրաստ է:

— Պատրաստ է:

Շուշիկը, չընկնելու համար, ամուր գրկեց ծառ:

— Արտո, գենդը պատրաստ է:

Պատասխանի փոխարեն, Արտոն հակառակ կողմից կտրեց
կասկածելի մարդկանց ճանապարհը և դաշույնն սպառնա-
կան ցույց տալով, հրամայեց.

— Ձեռներդ վեր:

Յեվ վախից յերկու փոքրիկ յերեխա ձեռները վեր
բարձրացրին, Ասլանը և Զլֆեն...

— Միայն յերկու հոգի՞ յեք, — հիասթափված հարցրեց
Արտոն:

— Այո... իսկ դուք, — հարցրին «թշնամիները»:

— Յերեք հոգի:

Կողմերը նայեցին իրար, ելի նայեցին, ապա քրքշացին
միաժամանակ:

— Մենք ել կարծում էինք...

Սաղարթների արանքից ներս թափանցեց լուսինը և

ծիծաղեց:

— Դե, հիմի առացեք, ի՞նչ գործ ունեք անտառում գիշերով, — հետաքրքրվեց Շուշիկը:

— Մե՛նք:

— Այո, դուք:

— Բա դուք ի՞նչ գործ ունեք անտառում գիշերով, — պատասխանի փոխարեն հարցրեց խորամանկ Ջլֆեն:

— Մե՛նք:

— Այո, դուք...

Յերկու կողմերը խորհրդավոր լռեցին:

— Իսկ ինչո՞ւ համար եք դանակով զինված, — խոսեց

Դուրգենը:

— Մե՛նք:

— Դուք:

— Բա դուք ինչո՞ւ յեք գաշույնով ման գալիս, — ձայնեց Ասլանը:

— Մե-՛նք:

— Այո, դո՛ւ-ձե՛ք...

Կողմերը դարձյալ լռեցին:

— Չի՛ լինի, ասեք, թե ձե՛ր եք գնում, — այս անգամ հարցրեց Արտոն:

— Մենք գնում ենք... Հենց այնպես գնում ենք, — կարճ կարեց Ասլանը, — իսկ դուք...

— Մենք ել հենց այնպես գնում ենք, դեպի Աղվեսաձոր:

— Դուք վաղուց եք անցել այդ գյուղը, յետ դարձեք, յետ, — նկատեց Ջլֆեն:

— Վոչինչ, մենք առանց յետ դառնալու յեղ դուրս կգանք այնտեղ, — խորհրդավոր ընդհատեց Արտոն, — դուք աշխարհագրություն անցնում եք:

— Անցնում ենք:

— Դիտե՛ք, վոր յերկիրը կլոր ե:

— Դիտե՛նք:

— Ուրեմն, մենք կարող ենք Աղվեսաձորից դուրս գալ, գնալ, գնալ, հասնել Յեվրոպա... Մազրիդ... Յեվ ելի գնալ, գնալ, և առանց վերադառնալու հասնել Աղվեսաձոր:

Ասլանն ու Ջլֆեն աչքի տակով նայեցին իրար:

— Նշանակում ե դուք գնում եք, գնում, գնում, վոր հասնեք Իսպանիա... Չի՛ լինի իմանալ ձեր նպատակը:

— Մենք իսկի ել Իսպանիա չենք գնում: Ո՞վ ասաց, ձեզ, ո՞վ ասաց, վոր մենք այնտեղ ենք գնում, — հուզված պաշտպանվեց Շուշիկը, — լսողն ել պիտի հավատա, վոր մենք... իսկապես գնում ենք Իսպանիա, ոգնելու հանրապետականներին, վոր ֆաշիստները ջարդվեն:

— Այ, մենք ել հենց դրա համար ենք գնում, — անըզդու լռությամբ խոսք փախցրեց Ջլֆեն, — յես կլինեմ կարմիր քույրիկ, իսկ Ասլանը... Ասլանը վոչինչ... — կմկմաց նա, զգալով ընկերոջ ծանր հայացքը, — մենք իսկի յեղ Յեվրոպա չենք գնում, մենք մեկնում ենք Բաթում, վոր նստենք նախ, հասնենք Իսպանիա, — ուղղելու փոխարեն ավելի խճրճվեց Ջլֆեն:

Հուսիսը նորից ծիծաղեց:

— Դե, լավ, լավ, մի վշտանա, սիրուն աղջիկ, մենք ել ենք գնում Իսպանիա, — համարձակ հայտարարեց Արտոն: — Ուզում եք, միանանք, մեկտեղ գնանք, յերեք եյինք, հինգ դառնանք:

Կարմիր քույրիկներն իսկույն մտերմաբար գրկախառնվեցին, սողաները վերցրին իրար թևը և վողեվորված առաջ անցան:

Յերբ հասան կայարան, գնացքը դեռ չեր յեկել: Գնեքին տոմսակ, յելան կառամատույց:

Շուշիկն զբոսնում եր, յերբ մեկը զարմացած ձայնեց:

— Շուշիկ, դու այստեղ...

Նա յետ նայեց: Ժպտալով մոտեցավ հոր ծանոթը:
— Բարև: Ո՞ւր ես գնում: Մենակ ես, թե՞ բժշկի հետ:
Շուշիկն ուզում եր պատասխանել, բայց ինչ վոր հիշելով, այլայլված թոթովեց:

— Իմ անունը Շուշիկ չե...

— Այ չարածճի, — ծիծաղեց ծանոթը, — բա վոր քո անունը Շուշիկ չե, ինչո՞ւ վոր կանչեցի անմիջապես յետ նայեցիր...

— Դա իմ սովորությունն է, յետ հաճախ եմ հենց այնպես յետ նայում...

— Լավ, յենթադրենք, վոր դու Շուշիկ չես, բայց ասա, խնդրեմ, մենակ ի՞նչ գործ ունես կայարանում:

— Ինչո՞ւ մենակ, — վիրավորվեց աղջիկը, — յես...

Մոտեցավ Արտոն, ընկերուհու շփոթված դեմքին նայելով, հասկացավ յեղելությունը, ասաց:

— Հասմիկ ջան, գնանք, հայրիկը, մայրիկը մեզ են կանչում: — Շուշիկն զգալով, վոր այլևս մենակ չե, հանդիսա ժպտաց:

— Հասկանում ես, Արտ... Ար... Արմենակ, այս ընկերն ինձ ինչ վոր Շուշիկի հետ է խառնում... Դու ասա, յես Հասմիկ եմ, թե՞ Շուշան:

— Իհարկե, Հասմիկ:

— Այդ դեպքում ներողություն, — այլայլվեց յերիտասարդը: — Ձեր քույրն այնքան նման է բժշկի աղջկան, վոր յես...

— Վոր դուք նմանեցնում եք... Ի՞նչ կա, կարող ե պատահել, — ներողամիտ ժպտաց Արտոն, բռնեց «քրոջ» թևը, հեռացավ:

Յերիտասարդը դեռ զարմացած նայում եր աղջկա հետեվից: Այդքան ել նմանություն... խոսակցությունը, քայլվածքը, մինչև անգամ շորերը: Յերկու որ առաջ հենց այդ շորերով եր տեսել Շուշիկին:

Նա դեռ յենթադրությունների մեջ եր, յերբ Փշշալեն գնացքը յեկավ:

ձանապարհորդներն իրար անցան. Գուրգենը կանչեց ընկերներին:

— Ի՞նչ եք կանգնել, շուտ առաջ անցեք, Ջլֆե, Ասլան, Արտո, Շուշիկ: Շուշիկ, վորա՞ն է:

— Այստեղ եմ, գալիս եմ, — բացականչեց Շուշիկը, միանգամայն մոռանալով հոր ծանոթին:

Յերբ նրանք վագոն նստեցին, բժշկի աղջիկն ընկերներին պատմեց պատահած դեպքը, ապա քահ-քահ ծիծաղեց:

— Այդպես ել միամիտ մարդ կլինի... Իսկույն հավատաց, վոր յես Հասմիկ եմ... Յեթե չստեյինք, նա կարող եր ինձ յետ տանել...

Յերբ գնացքը շարժվեց, Շուշիկը վտանգը միանգամայն անցած կարծելով, համարձակ նայեց պատուհանից դուրս և... նորից տեսավ հոր ծանոթին:

Ծանոթն սպառնական թափահարեց մատը Շուշիկի վրա և մտավ հեռագրատուն:

Այդ վերաբերմունքն ամենևին, ամենևին դուր չեկավ մեր կարմիր քույրիկին...

Գնացքը կանգնում եր կայարաններում, վերցնում նոր ձանապարհորդներ ու ելի վագում:

Այս անգամ գնացք մտան յերեք յերեխա: Նրանք ուսերին ունեյին մի-մի տոպրակ:

— Սրանք ել մեզանից կլինեն, — շնչաց Արտոն ընկերներին:

— Հա՛, — կիսաքուն ձայնեցին ընկերները և նորից փակեցին աչքերը: Խեղճերը շատ ելին հոգնել, նամանավանդ կարմիր քույրիկները:

Յերբ նորեկները տեղավորվեցին, Արտոն ժպտալով հարցրեց.

— Ամիսանագո, յողաշ, հարա գիշիր սըզ:

— Առաջմ թբիլիսի յենք գնում, — կտրուկ պատասխանեցին նրանք:

- Հետո՞
- Բաթումի։
- Այնտեղից։
- Վոչ մի տեղ...

Արտոն, փոխանակ վերափոխվելու, նրանց պատասխանեց.

— Ձեր պայուսակի միջից կացին է յերեւում, չէ՞ք կարող ավելի հարմար տեղ պահել։

Նորեկները շփոթվեցին։ Արտոն առիթից ոգտվելով, անմիջապես հարցրեց.

— Հիմա յե՞ր չեք ասում, թե ուր եք գնում։

Սոսիկոն նայեց Դոդիկին. Դոդիկը՝ Ամեդին։

— Մենք գնում ենք Իս... Իս...

— Այդպես ել գիտեյի, — ընդհատեց Արտոն. — մեք ճանապարհը մեկ է. հինգ եյինք, ութ դարձանք։

— Այ լավ բան, — վոզեվորվեցին նորեկները։

— Դուք կարմիր քույրիկ ունե՞ք, — խսկույն հետաքրքրվեց Շուշիկը։

— Վոչ, մենք բոլորս ել տղամարդ ենք։

— Վոչինչ, յերկու հոգի կանք, բավական է, — ոգտվեցին հասավ Զլֆեն։

Թե յե՞րբ դարձնեցին աղջիկները, ինչպես լոեցին շշուկները, զարմացան տղաները։

— Լավ է, նրանք մի աչքով կքնեն, մյուսով կհսկեն, չեն կորչի, — ուրախացավ Արտոն։

— Ապա, տոմսակ, ցույց տվեք ձեր տոմսակը, — լավեց ուղեկցողի ձայնը։

Յերբ ստուգելու հերթը հասավ յերեխաներին, նա ասաց՝

— Դուք վաղուց պիտի իջած լինեյիք։

— Քեռի, մենք Թբիլիսի յենք գնում, դեռ չենք հասել, — բացատրեց Արտոն։

— Հապա ինչո՞ւ տոմսը լրիվ չի հանված։

— Փողը պակասեց, դրա համար, քեռի։ Մենք Թբիլիսի յենք գնում, — ասացին կարմիր քույրերը։

— Ինչպե՞ս թե փողը պակասել է։ Մենք մեր որե՞նքն ունենք, խախտողներին կտուգանենք, — հայտարարեց ուղեկցողը։ — Քանի հոգի յեք. մեկ, յերեք, հինգ, հիսուն ուրիշ տուգանք։

— Կոպեկ չունենք, ընդհատեցին յերեխաները։

— Վոր այդպես է, ի՞ջեք։

— Ինչպե՞ս թե ի՞ջեք, — վախեցան յերեխաները, — մենք գնում ենք Ե... Ե... գիտե՞ք, թե վորտեղ ենք գնում...

— Չգիտեմ, իմանալու յել կարիք չկա. — ասաց ուղեկցողը, — դեհ վերցրեք ձեր կապոցները։

Յերբ գործն այդտեղ հասավ, Սոսիկոն, Ամեդն ու Դոդին ջրջրեցին իրենց գրպանները, հավաքեցին յեղած գումարը, ստացվեց ութ ուրլի յերեսունհինգ կոպեկ։ Բայց դա քիչ էր, չեր փրկի դրուժյունը։

— Քեռի քո հասցեն, տուր, վոր հասնեք Թբիլիսի, մնացած փողը փոստով կուղարկենք, — խնդրեց Սոսիկոն։

— Դժվել են սրանք, — բարկացավ քեռին։

Յերբ գնացքը կանգնեց, յերեխաները դառնացած ցած իջան...

Գնացին, գնացին, վերջապես հասան մի գյուղ։ Կոլարնաւեսականները նրանց սիրով ընդունեցին։

Հետո սեղան բացին նրանց համար, բերին զաթա, թարմ կարագ։ Իսպանիա մեկնողներն աշխուժացած, նստեցին հացի։ Առավոտից դեռ վոչինչ չեյին կերել և ճիշտն ասած, հոգնել էյին շատ։

Նրանց կողքին նստեց գառնաբաժ Սուրիկը։

— Ո՞վ եք, վճռեղից եք գալիս և ո՞ւր եք գնում, — հարցրեց նա։

— Մենք եքսիուրսանոններ ենք, — ասաց Զլֆեն։

— Առանց զեկավարի...

— Ձեր սարերում մենք կորցրինք իրար,— կմկմաց Սոսիկոն, կիջնենք ձորը, կմիանանք մեր խմբին...

Սուրիկը խորհրդավոր ժպտաց, ապա լուրջ հարցրեց.

— Կարդացել եք այսօրվա «Պիոներ Կանչը»:

— Վճշ: Ի՞նչ կա, վոր...— հետաքրքրվեցին ճանապարհորդները:

— Են կա, վոր Իսպանիայում կռիվը գնալով ուժեղանում ե... Մի քանի որ առաջ հանրապետականներն եյին ուժեղ, համա վերջին լուրերն ասում են, վոր խռովարարներն ելի սկսել են ուժեղանալ խաղաղ ժողովրդին: Յերեսանների դիակները...

Սուրիկը չկարողացավ շարունակել, արցունքով լցվեցին աչքերը:

Ճանապարհորդները սպրտանաժ նայեցին իրար, նրանց ձեռները ընկավ հացի պատառ:

— Վեր կացեք,— ասաց Արտոն:

Իսպանիա գնացողներն իսկույն վտառի թռան:

— Եղ ուր հանկարծ,— զարմացան կուտնտեսականները,— կերեք, հանգստացեք:

— Մենք արդեն կշտացանք, շատ շնորհակալ ենք,— թոթովեցին յերեսանները,— հարկավոր ե շուտ տեղ հասնել: Նրանք բավականին հեռացել եյին գյուղից, յերբ մեկ ել հանկարծ հեմիհեմ հասավ Սուրիկը:

— Հասկացա, թե ուր եք գնում, շնջաց նա,— յես ել եմ գալիս... Մադրիդի վրա գերմանական ինքնաթիռներ են յերևում. Մադրիդին վտանգ ե սպառնում: Հետո վառող եմ վերցրել, վառողն ել ինքս եմ պատրաստել: Ինչ լսել եմ Իսպանիայի մասին, խեղճս վրաս չի... Երեկ կուտնտեսության վոչխարն եմ կորցրել, եսօր ել գառը... նկատողություն անեն տեղն ե...

Ու առանց սպասելու, թե ինչ կպատասխանեյին ճանապարհորդները, խմբի առաջ անցնելով ասաց.

— Եսպես յեկեք: Կարճ կտրենք, վոր շուտ հասնենք:

Հասան թրբիլիսի, նստեցին խորհրդի:

Ինչպե՞ս շարունակել ճանապարհը, առանց փողի...

— Թրբիլիսիում այսքան մարդ կա,— ասաց Դոդիկը,— յեթե ամեն մեկից մի հինգ կոպեկ ուզենք...

— Ինչո՞ւ, մենք հո մուրացկան չենք,— խոսքը կտրեց Ասլանը:

— Իսկ յեթե բացատրենք մեր փող ուզելու նպատակը,— ավելացրեց Գուրգենը:

Այդ եր պակաս, ուզում ես, վոր մեզ բռնեն, հե՛տ ուղարկեն,— ծիծաղեց Շուշիկը,— յես առաջարկում եմ գնալ աշխատել:

— Ո՞վ մեզ գործ կտա, բոլորս ել յերեսա յենք:

— Բա ի՞նչ անենք:

Սոսիկոն ձեռքը ձակատին խփելով, ուրախ բացականչեց:

— Յես լավ լեզվինկա պարել գիտեմ:

— Յես ձեռների վրա կանգնել գիտեմ, իսկական ցիրկաչի պես,— հայտարարեց Ասլանը:

Դոդիկն ասաց, վոր թուշունի ձայներ հանել գիտե:

— Յես կյերգեմ Պեպոյի յերգը,— ձայնեց Շուշիկը:

— Մի բան ել յես կանեմ, չընդրվ-մընդրվ-ֆոկուս,— առաջարկեց Զլֆեն:

Ու վորոշվեց գնալ փող վաճառակելու, իսկ յերեկոյան հավաքվել կայարան, Բաթումի մեկնելու համար:

Յերեսանները վոգեվորված վտառի յելան: Արտոն ըզգուշ շնջաց.

— Լավ կանենք, վոր մեր զենքերն աղջիկներին տանք, նրանց ծալ-ծալ շորերի տակից չի յերևա:

Վաղ առավոտ եր. տղաները մտան մի բակ, գալտնի հանեցին դաշույններն ու ատրճառակները, աղջիկները գենքերը կապեցին իրենց վրա, դուրս յեկան:

Հասարակական պարտիզում մի բաց բեմ կար. Իսպանիա մեկնողներն ասացին, վոր իրենք չըջիկ դերասաններ են ու յեկել են ցերեկույթ տալու:

Հանգստի որ եր, ժողովուրդն ուրախ: Նրանք նայում էին ձեռների վրա վազվզող Ասլանին, թռչունի ձայներ հանող Դողիկոյին, լսում էին սերելի Պեպոյի յերգը, տոմսակներ գնում:

Զլֆեն թիթեռնիկի պես թռչկոտում եր բեմի վրա ու ձեռների ճարպիկ շարժումով մի բան վեր-վեր գցում: Վոչինչ չեր գցում, սակայն հավատացնում եր, վոր վեր-վեր ե գցում գույնզգույն գնդակներ...

— Զընգը՛լ-մընգը՛լ-ֆոկո՛ւս-մոկո՛ւս, ա՛յ... — բացականչեց նա, այս անգամ ողում ինչ վոր բաներ բռնելով — ահա նրանք, մեծ ու փոքրիկ, սև ու կարմիր գնդակներ:

Նա այդ գործողությունը կատարում եր այնպես արագ ու այնպես թեթև, վոր հանդիսականները մնում էին զարմացած:

Հետզհետե մեր հերոսներին շրջապատեցին բազմաթիվ յերեխաներ. առաջացավ հանդիսականների այնպիսի մեծ բազմություն, վոր «դերասանները» դժվարություններ կարողանում նրանց կարգի հրավիրել:

Արտոն հանդես յեկավ, վորպես շուն-կատու կովացնող: Նա այնպիսի վարպետություն եր հաջում, մղավում, վոր հավաքվեցին շները, պատերի վրա յերևացին կատուները: Հաջողությունից խրախուսված, նա անցավ յերկրորդ համարին. մի քանի անգամ գազազած վռնաց ու փֆֆաց

և իսկական շներն ու կատուներն արձագանքեցին նրան:

Թնդաց քրքիջը, հանդիսականները խնդրեցին կրկնել: Արտոն յերկար սպասել չտվեց:

Փֆֆոցի և մլավոցի վրա յերևացին նորանոր կատուներ, վազելեն յեկան կովելու միշտ պատրաստ շները:

— Միւ՛ս-սէ... միւ՛ս-սէ:

— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ...

Ու կպան իրար:

Տպավորությունը կատարյալ եր:

Նստել եր Արտոն թաղամասում, ծանր հառաչում եր...
Կանգնել եր Շուշիկը պատուհանի տակ, նմանապես
հառաչում եր:

Վե՛շ բարով տրամվայ նստեյին... ուզում եյին շուտ հաս-
նել կայարան, ի՞նչ իմանային, վոր փորձանք կպատահեր:
Տրամվայում շատ մարդ կար, պարզապես խեղդոց: Արտո-
յին հուպ տվին, սեղմեցին պատուհանին, մեկ ել շրջիկ,
ջարդվեց ապակին:

— Ո՞վ կոտրեց, ո՞վ, ո՞վ կոտրեց, — հարցրեց կոնդուկ-
տորը:

— Այս տղան, սե մազերով այս տղան, — պատասխա-
նեցին մարդիկ, Արտոյին ցույց տալով:

Տրամվայն արագ սլանում եր, յերբ պատահեց փորձան-
քը: Արտոն Շուշիկի ականջին ինչ վոր բան շշջաց ու
ցած թռավ...

Նա կարծում եր, թե անցել եր վտանգը, յերբ շվաց-
րեց միլիցիոները: Կանգնեց տրամվայը, իջավ պրովոզնիկը,
կազմեցին արձանագրություն ու միլիցիոները նրան տա-
րավ թաղամաս:

— Ա՛յ ընկեր, յես շրջանից նոր եմ յեկել, առաջին ան-
գամն եմ տրամվայ նստում, ի՞նչ իմանամ ձեր քաղաքի
կարգ-կանոնը, — փորձեց արդարանալ Արտոն:

— Յեթե չգիտես, գնանք թաղամաս, այնտեղ կսովո-
րես, — հանգիստ պատասխանեց միլիցիոները:

— Ախր յես ճամբորդ մարդ եմ, իմ ճամբան շատ ե
յերկար, ժամանակը վոսկի յե, բաց թող, գնամ:

Վոչինչ, վոչինչ չոգնեց:

— Լավ, մի ասա, տեսնենք, թե ինչի՞ տրամվայից չի
կարելի թռչել, — հարցրեց Արտոն:

— Վորովհետեւ թռչելիս կարող ես վոտդ կոտրել, կամ
ընկնել ավտոյի տակ:

— Իմ մահվան համար յես եմ պատասխանատու, դու
ինչո՞ւ յես անհանգստանում:

— Ինչպե՞ս թե... բա դու մերը չե՞ս, պետությանը
չե՞ս, ափսոս չե՞ս, — բացատրեց միլիցիոները. — քանի՞-քանի
յերեխաներ անզգուշության պատճառով կոտրել են իրենց
վոտքն ու այսոր փայտով են ման գալիս:

— Ճիշտ ե, ձիշտ ե, քեռի, — զգացվեց Արտոն, — ես
մի անգամ ինձ ների, ել այդպիսի բան չեմ անի:

Պատասխանի փոխարեն միլիցիոները ժպտաց. — Ժպտ-
տալով նրան մոցրեց թաղամաս:

— Ինչ լավ, վոր զենքս Շուշիկին տվի, յեթե ինձ
խուզարկեյին, գտնեյին, կորած եյի յես ել, Իսպանիան
ել, — մտածեց Արտոն, ուշիուշով դիտեց պատերը, ապա
մոտենալով պատուհանին, տեսավ Շուշիկին:

Շուշիկը կանգնել եր ծառի տակ և տխուր նայում եր
լուսամուտներին:

— Այստեղ եմ... Այստեղ եմ. — զգուշ ձայն տվեց Ար-
տոն:

Շուշիկը նկատեց նրան, ուրախացավ, նշաններով ինչ
վոր բան հարցրեց:

Արտոն թեկերը լայն բանալով մի բան նկարեց:
Շուշիկը նշան տվեց, հեռացավ: Քիչ հետո նա յերևաց, ձեռ-
քին կանեփի թել: Թեւը փաթաթեց քարին, զցեց Արտոյին:

Արտոն թելի մի ծայրը բռնեց, մյուսը կախեց ընկե-
րուհուն:

Ուշ յերեկո յեր, անձրև եր տեղում:

Յեկավ մի կին, հովանոցը հենեց ծառին, դրպանից
հանեց փող, պարզեց լրագրավաճառին:

— Տվեք խնդրեմ աշտորվա համարը:

Այդ բոպեյին Շուշիկը զարմանալի արագությամբ թե-
ղը կապեց հովանոցի կոթին, չքացավ:

Արտոն հովանոցը վեր քաշեց:

Կինը գնեց թերթը, խնամքով ծալեց, դրեց գրպանը,
ուզեց հովանոցը վերցնել, բայց գոռաց:

— Ախ, սրիկաներ, գողեր...

— Մորաքույր ջան, մի բոպե, միայն մի բոպե սպա-
սիր, հովանոցդ ետ կստանաս,— խնդրեց Շուշիկը, նայեց
թաղամասի դռանն ու միլիցիոններ չտեսնելով, նշան տվեց
Արտոյին:

Արտոն յելավ պատշգամբը, բացեց հովանոցը... ցատ-
կեց... իսկը պարաշյուտ...

Վռագելուց հովանոցը փակվեց. Արտոն գնդակի պես
սուրաց ցած:

Նա իհարկե կգարնվեր սալահատակին, կփշրեր գլուխը,
յեթե ծառերը ձեռների պես չբռնեյին նրան... Ագռավներն
այդ նոր տիպի թռչունը տեսնելով, սարսափած թռան
բներից, իսկ Արտոն մնաց ճյուղերի մեջ խճճված:

Շուշիկը վախից ծածկեց դեմքն ու հավատացած էր,
վոր ընկերն արդեն ընկել էր գետին և թպրտում էր ար-
յան մեջ...

— Ա՛-Ա՛րտո...— խուփ աչքերով փղձկաց նա:

— Վերև նայիր, լաց մի լինի,— ասաց Արտոն:

Շուշիկն անհամարձակ բարձրացրեց գլուխն ու վու-
սոստաց ուրախությունից:

— Յես ել կարծում եյի, թե մեռել ես...— բացա-
կանչեց նա:

— Չեմ մեռել, բայց...

Արտոն ուզում էր ասել, վոր չանդուտվել է ամբողջ
մարմինը, վոր այնքան ել հեշտ չե տանել այդ ցավը, սա-
կայն չուզեց պցել սիրելի ընկերուհու տրամադրությունը:

— Լավ թուա, չե,— տանջանքը զսպելով ծիծաղեց նա:

— Շո՛ւտ... — ընկերոջը խրախուսելու համար համա-
ձայնեց Շուշիկը. — դեհ, շուտ գնանք, վոր գնացքից չու-
շանանք:

Յերբորդ հարկից ցատկելուց հետո հեշտ էր ծառից իջնելը:

Չանցած մի բոպե զգգգված Արտոն կանգնեց Շուշիկի
կողքին: Շուշիկն ուրախությունից գրկեց նրան:

— Արտո, դեմքիցդ արյուն ե կաթում, — հանկարծ
վախեցած բացականչեց աղջիկը:

— Դա քրտինք ե...

— Քրտինքը կարմիր չի լինի:

— Իմը կարմիր ե...

— Հանեմ յող ու վիրակապ:

— Յեթե այսպիսի դատարկ բաների համար պաշարդ
սպառես, բա հանրապետականների վերքն ել ինչո՞վ պիտի
կապես, — նկատեց Արտոն, — դեմքս ինչպես վոր չանդուվել
ե, այնպես ել կանցնի, միայն թե հարկավոր ե շտապել:

Յերբ նրանք կայարան հասան, ընկերներն ուրախա-
ցած վազեցին ընդառաջ և հարցրին:

— Վորտե՞ղ եյիք, ինչո՞ւ այսքան ուշացաք:

— Պարաշյուտով թռչում եյինք...— պատասխանեց
Արտոն, չանդուված դեմքն ստվերում պահելով. — իսկ ովքե՞ր
են սրանք

— Մեր նոր ընկերներն են,— բացատրեց Սոսիկոն,—
ինգուշ, չուաշ, չեչեն:

Արտոն հպարտ նայեց հետզհետե աճող բանակին ու
թվաց, վոր մեկնն բուժվեցին մարմնի վերքերը:

Բարե քեզ, Բաթումի, միշտ կանաչ քաղաք:
Ի՞նչ կապույտ յերկինք ունես: Ի՞նչ լալն ե քո սիրտը՝
ծովը անհուն-անհուն:

Բա ծաղիկները, նարինջները, լիմոնն ու թեյը քո:
Բա արմավենիները, բանանները, կակաոսները քո:
Նքսկուրսանտները զուր չեն սիրում քեզ և զուր չեն
զալիս ամեն ծայրից քեզ այցի:

Մեր հերոսներն զբոսնում եյին ծովափնյա բուլվարում,
ժպտում եյին հրճվանքից:

— Այս ի՞նչ սքանչելի տեղ ե,— բացականչեց Ար-
տոն,— յես առաջարկում եմ Իսպանիայից վերադառնալիս
մի ամիս այստեղ հանգստանալ:

— Ճիշտ ե, սքանչելի տեղ ե,— արձագանքեցին ինչ
վոր անձանոթ յերեսաներ:

Մերոնք նայեցին նրանց, իսկույն յերեվաց, վոր այդ
խումբն ել ե յեկվոր և մեկնում եր, այն մեկնում եր
այնտեղ...

Նրանք խորհրդավոր զննեցին իրար ու բարեկցին:

Լալն ժպտացին նեղլիկ աչքերով կալմիկները, զազախ-
ները, ուզբեկները, կիրգիզները, շնջացին ինչ վոր խոսքեր,
վորոնց իմաստն առանց բառերի ել հասկացվեց: Ու բո-
լորը միասին զիմեցին նավահանգիստ:

Այնտեղ նրանք հանդիպեցին երի յերեսաների, նարն-
ջազույն աշարների, արեադեմ արեսաղների, շեկիկ-մեկիկ
ուռաների:

Սուր հայացքներով զննեցին իրար, մոտեցան դրա-
մարկղին:

Յերբ տոմս գնելու հերթը հասավ Գուրգենին, նա
պարզեց փողը, ասաց:

— Տվեք, խնդրում եմ... Տոմսակ տվեք մինչև են-
տեղ...

— Վճրաեղ:

— Մինչև... Սոսիկո, մինչև վճրաեղ,— շփոթվեց
Գուրգենը:

— Չգիտես մինչև... Չլֆե, մինչև վճրաեղ:

— Այդ ի՞նչ ե, մենակ եք գնում,— զարմացավ տոմ-
սավաճառը, մոլորված յերեսաներին նայելով:

— Վոչ, մենք գնում ենք ամբողջ խմբով:

— Այդ դեպքում կանչեցեք ղեկավարին:

— Արտո, այ Արտո, այստեղ արի, շուտ, առանց քեզ
տոմս չեն տալիս,— անհանգիստ ձայնեցին Իսպանիա գնա-
ցողները:

Արտոն, վոր մինչ այդ ջերմ զրույցի յեր բռնվել
աջար Դուբուռնի հետ, լուրջ մեջտեղ յեկավ:

— Ի՞նչ եք կամենում:

— Ձեր մեծին եմ ուզում,— զժգոն նկատեց տոմսա-
վաճառը, դեմը նույնպես յերեսա տեսնելով:

— Յես եմ մեծը,— կտրուկ պատասխանեց Արտոն:

Դիմացինը վազելուց, պզվելով այդ փոքր մարդու
լուրջ արտահայտությունից, թե պարզապես ձանձրանալով
յերեսաների ներկայությունից, կարճ հարցրեց.

— Քանի՞ տոմս և մինչև վճրաեղ:

— 55 տոմս, մինչև Ստամբուլ:

Տոմսավաճառը, փոխանակ փողը վերցնելու, շրմփալեն
պատուհանը փակեց:

— Խանգարում են, պարզապես խանգարում են այդ
զաճաճները: Ձեն թողնում հանգիստ աշխատել, — լսվեց
ներսից նրա հուզված ձայնը:

Յերեխաները զարմացած նայեցին իրար։ Ի՞նչ վատ բան առեցին, վոր «մորաքույրն» այդպես զոռաց նրանց վրա... Հարցրեց քանի՞ տոմս և մինչև վճրտեղ։ Պատասխանեցին. 55 տոմս, մինչև Ստամբուլ։ Տոմս չկա, քաղաքավարի հայտարարի՝ չկա։ Ել պատուհանը շրմիացնելը վճրն է — Արտոն ուզում էր պատասխանատվության յենթարկել։ այդ կռապիտ ծառայողին, յերբ բարի դեմքով մի ծերունի ասաց։

— Ստամբուլն արտասահման է, չգիտեք, վոր չի կարելի այնտեղ գնալ։

Յեվ առաջին անգամ Իսպանիա մեկնողների առաջ դրվեց այդ դժվար խնդիրը։

— Ի՞նչպես անցնել սահմանը...

— Պապի, Սև ծովը և մերն է, և տաճիկներին, չէ,— հարցրեց Արտոն բարի դեմքով ծերուկին։

— Այո։

— Չի՞ լինի ասեք, թե վճրտեղ ե վերջանում խորհրդային ջուրը և վճրտեղ ե սկսվում բուրժուականը։

— Ողեսայում, — ծիծաղեց խոսակիցը։

— Իսկ Ողեսայից են կողմն անցնելու համար ի՞նչ ե պետք։

— Թույլտվություն։

Արտոն մռայլվեց. մեծ դժվարությունը գան, հասնեն ծովափ ու չկարողանան շարունակել ճանապարհը...

— Ինչո՞ւ համար ես այդպես հետաքրքրվում,— հարցրեց ծերունին։

— Ուզում եմ Ստամբուլ գնալ, պապի, թե կարող ես, ոգնիր,— խնդրեց Արտոն.— մայրս այնտեղ է, ծանր հիվանդ ե... այնտեղ ե... այնտեղ մեռնում են յերեխաները... նրանք թաթիկները պարզած մեզ... ինձ են սպասում...

Ու դողաց նրա ձայնը։

— Շատ եմ ցավում գանգրաներ բալիկ,— ասաց ծե-

րունին,— բայց դժբախտաբար ոգնել չեմ կարող։ Թույլտվությունը պետությունն է տալիս։

Սոսիկոն ընդհատեց նրանց զրույցը։

— Մինչև Ողեսա յել տոմս չեն տալիս,— վրդոված հայտնեց նա,— տեղ չկա։ Իսպանիա գնացողները շարվեցին պատի տակ և նրանց համար փայլուն ցերեկը մութ գիշեր դարձավ։

Շչակը սուլեց, նավի սանդուխքները բարձրացրին, խարխիսը քաշեցին։ Շոգենավը շարժվեց։

Յերեխաները թաց աչքերով նայեցին լողացող «Լենին» նավին։

— Գնաս բարով, «Լենին», բայց առանց մեզ ես գնում, «Լենին», — մղկտացին նրանք։

Մնացողներն այնպես կենտրոնացած էյին հետևում հետզհետե հեռացող փոքրացող շոգենավին, վոր ամենեվին չզգացին, թե ինչպես հասարակությունը շրջապատեց նրանց։

— Ովքե՞ր են սրանք, վորտեղից են յեկել,— հարցրին մարդիկ միմյանց։

— Կարծես ազգային փոքրամասնությունների համագումար լինի. ինչպես ել գտել են իրար...

— Այ Արտո, բա ի՞նչ անենք,— խեղճացած ձայնեցին ընկերները։— Արտոն չլսեց։ Նրա ուշադրությունը գրավել էյին միլիցիոներները։ Նրանք ձեռներին հեռագիր ունեյին։ «Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Տասերկու տարեկան... տաս տարեկան... տասնմեկ տարեկան... Կալմիկ, չեչեն, հրեա։ Հայ, ադրբեջանցի, վրացի։ Դյուրդ, յեզդի, ասորի։ Ռուս, կաբարդին, թաթար։ Ղազախ, կազակ, ուզբեկ։

Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Շեկ մազերով կապտաչյա։

Սև մազերով թուխաչյա։

Նեղլիկ աչքեր, դեմքը լայն։

Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Միլիցիոներները հանդարտ առաջ անցան, իբրև թե նա-
յում են ծովին, ալիքներին...

Վատ նախազգուշացումը ցնցեց Արտոյին:

— Տղերք, փա-ա-ախ...

— Փա-ախեք... — իբար նշան տվին ընկերները:

Նրանք մի քանի քայլ հաղիվ ելին արել, յերբ միլի-
ցիոներները շվացրին: Շվոցի վրա, ասես գետնի տակից
բուսան յեկա մի քանի միլիցիոներ: Կազմեցին ողակ:

Ճարպիկները դուրս սողացին նրանց փոտների արան-
քից: Վոմանք թռան պատից, մի քանիսը կառավի պես
մագլցեցին ծառին, այնտեղից կտուր, իշան ինչ վոր բակ,
այնտեղից ելի մագլցեցին, թռան ուրիշ բակ: Շները գա-
զազած ընկան նրանց յետեվից: Իրարանցման վրա սենյակ-
ներից դուրս թափվեցին բնակիչները:

— Բռնե-ցե-եք:


Պաղաղ Բաթումին ծովի պես ալեկոծվեց: Կարգ պաշտ-
պանելու համար նորանոր միլիցիոներներ վազեցին:

Ու բռնեցին, բռնեցին, բռնեցին...

Մինչդեռ հեռագրատունն ելի հաղորդումներ եր ստա-
նում.

«Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Ուղարկել յետ... Ուղարկել յետ... Ուղարկել յետ...»



ԽՈՐՀՐՂԱՎՈՐ ԱՐԿՂԵՐՆ ՈՒ ԶԱՐՍԱՆԱԼԻ ՇՈՒՆԸ

— Հիմի կարող եք ել
չվաղել, մեր տանն ենք
արդեն, — ասաց Դուրսուն-
նը. — բայց... Բայց ես ին-
չի՞ յենք նման:

Պատերից շրջվելիս փո-
շտովել ելին, ջրերից անց-
նելիս ցեխտավել, ցան-

կապատերից թռչելիս պատուվել ելին նրանց շորերը և այժմ
ձվեն-ձվեն կախվել ելին, նամանավանդ Զլֆեյի և Շու-
շիկի շորերը:

Արտոն ընկերներին նայելով, մոայլվեց:

— Լավ չի, վոր միայն ես հինգս ենք ազատվել...
Վճրտեղ ե Ասլանը, Դողիկը, մյուսները բա...

Սենյակում տնքում եր Դուրսունի մայրը: Նա ծանր
հիվանդ եր: Տղան առաջարկեց գնալ ներքնահարկ: Այնտեղ
կարելի յեր և հանգստանալ և համարձակ խոսել անելիք-
ների մասին:

Յերեխաներն իշան ցած: Դուրսունը բերեց հաց, մի
քանի տասնյակ նարինջ: Ուտելիքը դեռ սփռոցին չդրած՝
չքացավ... Կազդուրված ուժերով նստեցին խորհրդի:

Դուրսունն ասաց:

— Հայրիկս նարնջի պահեստի պահակն ե: Նարինջ ար-

Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Միլիցիոներները հանդարտ առաջ անցան, իբրև թե նա-
յում են ծովին, ալիքներին...

Վատ նախազգուշացումը ցնցեց Արտոյին:

— Տղերք, փա-ա-ախ...

— Փա-ախեք... — իրար նշան տվին ընկերները:

Նրանք մի քանի քայլ հաղիվ ելին արել, յերբ միլի-
ցիոներները շվացրին: Շվոցի վրա, ասես զեռնի տակից
բուսան յեկա մի քանի միլիցիոներ: Կազմեցին ողակ:

Ճարպիկները դուրս սողացին նրանց փոտների արան-
քից: Վոմանք թռան պատից, մի քանիսը կառվի պես
մագլցեցին ծառին, այնտեղից կտուր, իջան ինչ վոր բակ,
այնտեղից ելի մագլցեցին, թռան ուրիշ բակ: Շները գա-
զազած ընկան նրանց յետևից: Իրարանցման վրա սենյակ-
ներից դուրս թափվեցին բնակիչները:

— Բռնե-ցե-եք:


Խաղաղ Բաթումին ծովի պես ալեկոծվեց: Կարգ պաշտ-
պանելու համար նորանոր միլիցիոներներ վազեցին:

Ու բռնեցին, բռնեցին, բռնեցին...

Մինչդեռ հեռագրատունն ելի հաղորդումներ եր ստա-
նում:

«Կորել ե... Կորել ե... Կորել ե...

Ուղարկել յետ... Ուղարկել յետ... Ուղարկել յետ...»



ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՐԿՂԵՐՆ ՈՒ ԶԱՐՍԱՆԱԼԻ ՇՈՒՆԸ

— Հիմի կարող եք ել
շվագել, մեր տանն ենք
արդեն, — ասաց Դուրսու-
նը. — բայց... Բայց ես ին-
չի՞ յենք նման:

Պատերից շրջվելիս փո-
շտով ելին, ջրերից անց-
նելիս ցեխտովել, ցան-

կապատերից թռչելիս պատով ելին նրանց շորերը, և այժմ
ծվեն-ծվեն կախվել ելին, նամանավանդ Զլֆեյի և Շու-
շիկի շորերը:

Արտոն ընկերներին նայելով, մռայլվեց:

— Լավ չի, վոր միայն ես հինգս ենք ազատվել...
Վհրտեղ ե Ասլանը, Դողիկը, մյուսները բա...

Սենյակում տնքում եր Դուրսունի մայրը: Նա ծանր
հիվանդ եր: Տղան առաջարկեց գնալ ներքնահարկ: Այնտեղ
կարելի յեր և հանգստանալ և համարձակ խոսել անելիք-
ների մասին:

Յերեխաներն իջան ցած: Դուրսունը բերեց հաց, մի
քանի տանյակ նարինջ: Ուտելիքը դեռ սփռոցին չդրած՝
չքացավ... Կազդուրված ուժերով նստեցին խորհրդի:

Դուրսունն ասաց:

— Հայրիկս նարնջի պահեստի պահակն ե: Նարինջ ար-

տասանման ուղարկում են մե-եծ արկղներով: Եգուց առա-
վոտ բարձելու յեն տաճկական նավը:

Նա լռեց, զգուշության համար ականջ դրեց դրսի
ձայներին, ապա հազիվ լսելի շշնջաց:

— Այս գիշեր իմ հայրիկն է պահեստի հերթապահը:
Նա ցերեկները սովորաբար քնում է, վոր գիշերները լավ
հսկի, բայց այսօր չի քնել, գիշերը կխուժիացնի:

— Հորդ քնելուց մեզ ի՞նչ ոգուտ,— անհամբեր ընդ-
հատեցին ընկերները:

— Հայրիկը վոր քնի, մենք համարձակ կգնանք պա-
հեստ, կդատարկենք մի քանի արկղ նարինջ, դուք կմտնեք
նրանց մեջ, յես ել կափարիչները կմեխեմ:

Յերեխաները ժպտացին:

— Առավոտյան կգան բանվորները. կբարձեն նարին-
ջը, իհարկե ձեզ ել նրանց հետ ու դրանից հետո նավը
կգնա, կգնա, կհասնի Ստամբուլ:

— Սեվ ծովն անցնելուց հետո, մի կերպ ել Միջեր-
կրականը կանցնենք,— շարունակեց Դուրսունը:

Յերեխաները վոգեորությունից ծափ տվին:

— Եդ բոլորը շատ լավ,— խոսեց Շուշիկը,— իսկ դու
չե՞ս գա մեզ հետ:

— Իհարկե կգամ,— հայտարարեց Դուրսունը:

— Բա ո՞վ պիտի մեխի քո արկղը:

— Յես այլ կերպ նավը կմտնեմ,— խորհրդավոր
ասաց նա:

— Ափսոս, վոր չկան մեր մյուս ընկերները,— հառա-
չեց Գուրգենը,— թե չէ, նրանք ել մեզ հետ ճանապարհ
կընկնեյին:

— Ո՞վ գիտե, գուցե նրանք ել հիմա գնալու պատ-
րաստություն են տեսնում,— յենթադրեց Արտոն:

Պայմանները բարենպաստ էյին: Մուլթն իջավ: Յեր-
կինքն ամպեց: Լուսինն աստղերի հետ դիտմամբ պահվեց

ամպերի յետևը, վոր յերեխաները խափարում ավելի հա-
մարձակ գործեյին:

— Շուշուտ,— շվացնում եր քամին:

Ոգնում եր և ծովը: Այիքներն այնպիսի շառաշյունով
էյին զարնվում ավերին, վոր խլացնում էյին մուրճի հար-
վածները:

Իսկ հայրը... Դուրսունի հայրը խուժվում եր նստա-
րանի վրա փռված:

Դուրսունը մթան մեջ զարմանալի արագությամբ եր
շարժվում: Պահեստից գտավ, բերեց հինգ մեծ արկղ, հա-
տակին փռեց ծովային փափուկ խոտ, ընկերները խիսուն-
ջի պես մտան մեջը:

Դուրսունը բոլորի կրծքին դրեց հաց, նարինջ, վոր
եանապարհին քաղցած չմտն, կափարիչը ծածկեց, սկսեց
ճմեխել:

Քնքուշ կարմիր քույրերը հեշտ տեղավորվեցին իրենց
նոր բնակարաններում, նմանապես տղաները: Արտոնի բանն
ը դժվար, նա թիկնեղ եր, բարձրահասակ: Արկղը նեղ եր:
Ինչքան կծկվում եր, մարմնի կեսը դուրսն եր մնում

— Յեթե մի քանի որ հաց չուտես, հո չե՞ս մեռնի,—
հարցրեց Դուրսունը:

— Ձեմ փորձել, բայց յեթե առիթ չինի, կաշխատեմ
վողջ մնալ— պատասխանեց Արտոն,— ի՞նչ կա վոր...

— Յեթե խոստանում ես, ուտելիքը հանեմ, գուցե
կափարիչը փակվի:

Արտոն մռայլվեց: Դժվար եր համաձայնվել պայման-
ների հետ: Հեշտ չեր որերով անհաց մնալ... Սակայն յերբ
հիշեց, վոր իսպանացի յերեխաներն ել են քաղցած, ասաց:

— Դե լավ, թող այդպես լինի...

Դուրսունը վերցրեց ուտելիքը, ամբողջ ծանրությամբ
չոքեց կափարիչի վրա, սեղմեց, և արագ մուրճի ծանր
հարվածներ իջեցրեց:

Այդ դեպքում մնաւ բարով Իսպանիա, մնաք բարով հանրապետական մանուկներ, եւ չկան ձեր փրկիչները...

Այստեղ Շուշիկն այնպէս վշտացաւ, վոր սկսեց լալ...

— Ծնւղ-րու-ղո՛ւ:

Աղջիկը լարեց լսողութիւնը: Դուրսունն էր, սիրելի Դուրսունը:

— Կը՛տ-կը՛տ-կը՛տ:

Դուրսունը մոտեցաւ թաց արկղին: Եդ վո՛ր խեղճն էր մեջը:

Նա զգուշ հարցրեց:

— Անունդ:

— Շուշիկ:

— Վայ, ջանիկ... աշխատիր չհիվանդանալ. ֆիզիկո-տուրայով պարապիր, վոր տաքանաս:

— Այս արկղի մեջ, — ծիծաղեց Շուշիկը:

— Վոր ծիծաղում ես, նշանակում է տրամադրութիւն-նրդ լալ՝ ե, ուրախացաւ Դուրսունը. — ս՛ր ս՛ա... գալիս են:

Յերեվաց Տեղոն, գաղտագողի վերջրեց թրջված արկղը, շտապ նալ բարձրացաւ: Յեթե վարչութիւնն իմանար, վոր նա թրջել էր արտահանվող նարինջները, վայն յեկել էր նրան տարել...

Վասոն շարժեց մի արկղ. դարմացած բացականչեց:

— Վո՛ւյ-վո՛ւյ, ես մեկն ի՛նչ ծանր ե. ապա, Վախ-տանգ, ոգնիր, շալախ տուր:

Մոտեցաւ ընկերը, գննեց արկղը, զժգո՛հ նկատեց:

— Հը, ենքան նարինջ են խցկել, վոր խուփը լալ չի փակվել. մուրճը բեր:

— Խփելով բան դուրս չի դա, — հակառակեց Վասոն, — լալն են ե բանանք, դատարկենք, չէս տեսնում քիչ ե մնում կողերը պոկվեն:

Արկղում Արտոն էր: Նա սարսափից սեղմեց ծնոտները:

Յեթե բանան կափարիչը. կհանեն իրեն: Կծեծեն, չեն, չեն ծեծի: Կգնան թաղամաս, կհարցնեն. — ինչի համար

եյիր արկղ մտել և ո՞վ ե ոգնել քեզ... Դե՛հ, յեկ ու պատաս-խանիր: Խոստովանել նշանակում է մատնել ընկերներին:

Ու նա գառնացած մղկտաց:

— Մնաս բարով, Իսպանիա, մնաք բարով մանուկներ, եւ չկան ձեր փրկիչները...

— Ծուղ-րու-ղո՛ւ:

Արտոն լարեց լսողութիւնը: Դուրսունն էր. սիրելի Դուրսունը:

— Կըտ-կըտ-կըտ, — խրախուսված կանչեց Արտոն:

— Կա-մաց, ախանջներ կա-մ-ան...

— Բա-մ-մ... բառաչեց շոգենավը:

— Չենք հասցնի, — ասաց Վասոն, արկղն ինչպէս կա, հարկավոր ե նույնությամբ ել բռնել:

Ու տարան Արտոյին:

Յերեխաները, բացի Դուրսունից, առաջին անգամն եյին նալ նստում, են ել արկղների մեջ մեխված... Մինչ-դեռ նրանք այնպէս, այնպէս եյին ցանկանում տեսնել բաց ծովը, ալիքները ծփուն, ափերը կանաչ-կանաչ... Տես-նել, թե ինչպէս արևը հայելու նման շողշողում ե ջրի յերեսին, ինչպէս մեծ ձկները վազում են նալի յետեւից, իսկ զելֆինները խումբ-խումբ պարում են ալիքների մեջ...

Նրանք հառաչեցին փակ արկղներում. փակեցին աչքերը, քնեցին: Զարթնեցին, դարձյալ քուն մտան: Դժվար էր իմա-նալ, դրսում գիշեր ե, թե՛ ցերեկ, անցել եյին սահմանը, թե՛ զեռ լողում են խորհրդային ջրերում: Ամենից շատ նկզվում էր Արտոն: Նրան տանջում էր և քաղցը: Չնայած Դուր-սունին խոստացել էր չմեռնել, բայց կարծես թե յերգումը դրժելու յեր:

Ընկերները միան նման պաշար եյին կրծում հաց և ամեն պատառը կուլ տալիս, հիշում քաղցած Արտոյին:

— Ուզո՞ւմ ես, մենք ել չուտենք, — շշնջաց Զլֆեն:

— Չէ-է, կերեք, միայն թե... միայն թե... փռնիչ,
անուշ արեք:— լավեց Արտոյի թույլ ձայնը:

Նրա տրամադրութիւնը վատ երևում էր և նրա համար, վոր
Դուրսունն իրեն զգալ չէր տալիս: Չլինի՞ բռնել էյին, իջեց-
րել... և ինչքան ժամանակ եր անցել, ինչ թողել էյին Բա-
թումին. բա ինչո՞ւ գեթ մի անգամ չէր կանչում:

Մեկ էլ հանկարծ —

— Ծնւղ-ընւղ-ընւղ:

— Կը՛տ-կը՛տ-կը՛տ, — ժիր պատասխանեցին արկղները:
Արտոն այնպէս փոփոխուեց ընկերոջ ձայնից, վոր ու-
զեց դուրս նետուել:

Նրա ուժեղ շարժումից գլորվեցին վրայի արկղները,
ու շրփ-շրփ ընկան հատակին:

Աղմուկի վրա ներս վազեց Հասանը:

— Ալլահ, — զարմացավ նա, — շուրջը դիտելով, —
ծովը խաղաղ է, իսկ արկղները գլորվում են, դեմ է մտել
մեջը...

Նա բարձրացրեց արկղները, փնթփնթալեն դուրս յե-
կավ:

Դուռն մեջ նրան մոտեցավ անճուռնի մեծ շուն: Շան
յետեմի վտանները հաստ էյին, առաջինները՝ բարակ ու կարճ,
նա ցատկում եր ճագարի պէս:

— Ալլահ — ալլահ, — բացականչեց Հասանը, — նավ և շուն:

Շունը հաճույքով վըգստաց, շարժեց պոչը, քոքովեց
նրա վտաններին:

— Ալլահ, շնորհքդ շատ, — շնջաց նա գլուխը վեր բարձ-
րացնելով:

Առաջացան նավաստիները: Չորքոսանու ներկաչու-
թիւնը և զարմանք և հաճույք պատճառեց նրանց:

Նրանք աշխուժացած շրջապատեցին կենդանուն, շոյե-
ցին, հաց տվին, շունը հոտոտաց, չկերավ:

— Կրթված է, ուրիշի կրծածը չի ուտում, — ծիծաղեց

մեկը: — Ապա, թե կրթված էս, կանգնիր յետեմի թաթերիդ
վրա:

Շունը կրկնել չովեց, ձգվեց ամբողջ հասակով դեպի
վեր ու առջևի թաթը ճակատին տանելով, բարև տվեց:
Նավաստիները շշմած մնացին:

— Պուցե այս անգամ առջևի թաթերի վրա բարձրա-
նաս, — հենց այնպէս առաջարկեց Հասանը, ինքն ել, իհարկե,
իր ասածին չհավատալով:

Շունն ակրորատի նման յեկավ ձեռների վրա, ապա
դիտակոնծի տվեց:

Հանդիսականները բերանները բաց նայեցին իրար և
յերբ լույսը վառեցին շանն ավելի լավ տեսելու համար
նա էլ չկար...

Հասանը գտավ նրան պահեստում, նախնի արկղների
կողքին: Գլուխը դրել եր թաթերին ու քնել:

Հասանը նայեց նրան, մտածեց:

Շանը կկերակրի, կհասցնի Ստամբուլ, կտա մեծ տղին:
Տղան նրան կտանի բաղերը, փող կվաստակի... Հասանն
ունի մայր, կին, վեց յերեխա: Ստանում է այնքան, վոր
տուն է տանում միայն սև հաց... հաճախ յերեխաները չեն
քնում քաղցից... Նրանք թույլ են, քնքուշ ու դեղնած: Կինն
ուզեց մտնել գործարան, չընդունեցին: Յեղած բանվորներն
են կրճատվում: Փորձ չկա:


Մեծ տղան գողությամբ է զբաղվում: Գողութիւնը
հորը պատիվ չի բերում, սակայն ստիպված է հաշտվել դրա
հետ: Հիմա շունը կարող է փրկել նրան:

Ու այդ մտքից պայծառացավ մոռյլ Հասանը:

Նա զրպանից հանեց որպապահիկ հացը, դողդողջուն
ձեռներով յերկու կես արավ, մի մասն ինքը կերավ, մյու-
սը գցեց շանը:

Շունը բարձրացրեց գլուխը. յերախտագիտությամբ
փարվեց Հասանի վտաններին:

Ձարմանալի՞ շուն...



ՆԱՐԻՆՁՆԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ...

Հաջորդ յերեկո անըստ-պատահական յեղանակը վատացավ: Ծովի վրա սոսկալի փոթորիկ բարձրացավ: Ալիքները, մեկը մյուսից հուժկու, յեկան զարնվեցին նավին, ապա հասան հաջորդ ալիքները, ավելի կատաղի, ավելի փրփրուն:

Նավը խորտակվում էր...

Նավաստիներն անցան լարված աշխատանքի: Նավապետը մուսյլ կերպարանք ստացավ: Շունն ականջները ցցած վազվզում էր վերևից ներքև, վռնում գազազած:

— Սառկեցնել այդ անասունին, — վրդոված հրամայեց ավագ նավաստին, — ալիքների մոնչոցը կարծես քիչ է, դա յեր պակաս...

Շունը վախեցած պոչը կծկեց. հեռացավ:

— ԾճԼԳ-ՐՈՒ-ՂՈՒ:

— Կըտ-կըտ-կըտ, — պատասխանեցին արկղները:

Այդ ժամանակ լավեց նավապետի խրոխտ հրամանը:

— Նարինջները ծովը թափել. բեռը թեթեվացնել:

Դուրսունը սարսափեց... Ծովը թափել նարինջները...

Ասել է ծովը թափել և Իսպանիա գնացողներին...

Յեթե նա ընկերներին հայտներ լսածը, ընկերները վախից կարող էին լաց լինել: Մարդիկ մեկնում են հանրա-

պետականներին պաշտպանելու, դրա փոխարեն պիտի իջնեն Սև ծովի հատակը:

Ձե, փրկել է պետք:

— ԾճԼԳ-ՐՈՒ-ՂՈՒ:

— Կըտ-կըտ-կըտ:

— Իմ ջան հավիկներ... Հիմա գալիս են, ծովը գցեն, — զգուշացրեց նա, բայց միջ վախենա, հենց վոր մոտենան ձեր արկղներին, գոռացեք միաբերան:

— Դուրս, դուրս, ձեռք չտալ մեզ. կսպանենք ձեզ...

Դուռը բացվեց. յերևաց Հասանը, Դուրսունն ինչ վոր չշնչաց, պահվեց:

— Յուզաշ Հասան, մի թող, վոր մեզ ծով թափեն, — աղաչեցին «նարինջներ»-ը:

— Ալլահ ալլահ — թոթովեց խեղճ աղբբեջանցին, — ռվ ետեսել, վոր նարինջը խոսի, խոսի մարդու պես... Կործանվիր, կործանվիր, դու չար սատանա:

— Վոչ աստված կա, վոչ սատանա, — հոհացին արկղները:

Այս անգամ յերկյուղից Հասանի լեզուն կապվեց: Նա շնչասպառ դուրս նետվեց պահեստից, ընկավ նավաստիների մոտ, վոչինչ չկարողացավ ասել:

Ծովը զալարվում էր վիշապի պես: Նավը խորտակվելուն մոտ էր:

— Թափե՛ն նարինջները. շճԼ-ՈՒ-ՈՒՄ...

Այս անգամ բանվորների հետ պահեստ վազեցին և նավաստիները: Հասանը հասկացնում էր, վոր ներս չմըտնեն, այնտեղ չարքեր կան պահված, նարինջները խոսում են:

Լսողներից վոմանք ծիծաղեցին ցնորամիտ հավաքորարի վրա, վոմանք հայհոյեցին, վոր այդ ճակատագրական բռնկյին աղուշի մեկը փոխանակ ոգնելու, խանգարում է, ապա զայրացած հրեցին նրան, ներս մտան:

— Յուզաշար...

Նավաստիներն այլալվեցին:

— Դուրս, դուրս, — աղաղակեցին արևիկները, — ձեռք
չտաք մեզ, կապանենք ձեզ:

Նավաստիները վախեց յետ-յետ գնացին...

Հասանը վազեց նավապետի մոտ և կակազելով ասաց:

— Թույլ տվե՞ր... Թույլ տվե՞ր զեկուցելու... պահես-
տում խոստում են նարինջները...

Նավապետը վրդովված ապտակեց նրան:

— Ապուշ, յեթե տեղդ դժանոցն է, ի՞նչ գործ ունես
նավի վրա: Ի՞նչպես թե նարինջները խոստում են:

Հասանը զինվորականի պես ձգվելով, կրկնեց.

— Խոստում են նարինջներն իսկական մարդու նման:
Նավապետն ել չսեց նրան: Տեսնելով հուժկու ալիք-
ները, կարգադրեց գցել խարխուլը:

Բռնւմ, բռնւմ, բռնւմ... Ծով ելին նետվում արևիկները...

Կարծես մեղմացավ փոթորիկը:

Հետզհետե խաղաղվեց ծովը, հարթեցին ալիքները,
դելֆիններն ելին ջրի յերեսն յերան:

Հանդարտվեց հույզը և նավի վրա: Հոգնած նավա-
ստիներն ազատ շնչեցին: Բանվորները մնացած արևիկները
նորից իջեցրին պահեստը: Նավը լողաց հեղիկ-նազիկ, կար-
ծես փոշինչ չի յեղել:

Տխուր եր... Տխուր եր Հասանը:

Ծեծում են...

Ծերացել եր, բայց աշխատում եր դեռ: Նավի հա-
վաքարարն եր. խոհարարի ոգնականն եր, ամանները լվա-
ցող: Կարծես այդ քիչ եր, պահեստի մաքրությունն ել
եյին նրան տվել: Յեվ ի՞նչ եր ստանում, որական յերկու
զուրուշ: Դժգոհ էս, հեռացիր: Պաշտոնիդ աչք գնող այն-
քան, այնքան գործազուրկ...

Խորհրդային յերկրում այդպես չէ: Նավը բարձելիս
շատ զարմանալի բաներ եյին պատմում աջար բանվորները:

— Ե՛հ, Ալլահ, հոգիս առ, աղատվեմ, — թախանձեց
նա վշտացած:

Յերբ ավելը վերցրեց, նորից խոսեցին արևիկները:

Շուշիկն ասաց:

— Ա՛խ, յերանի շուտ հասնեյինք, ինձ թվում է, վոր
մեռնում եմ արդեն:

— Դու այնպես արա, վոր չթվա, ասա չեմ մեռնի,
չեմ մեռնի, ու չես մեռնի, — խրախուսում եր Զլֆեն, չնա-
յած ինքն ել նրանից պակաս չեր ձանձրացել:

— Բա պատերազմ գնալը հեշտ բան էյիք կար-
ծում, — ծիծաղեց Սոսիկոն, — մեզ թվում է, վոր մեռնում
ենք, միշդեռ Իսպանիայում իսկապես են մեռնում: Ո՞վ
գիտե, հենց այս րոպեյիս քանի յերեխա յե թաղտում
արյան մեջ...

— Շուտ հասնենք, փրկենք նրանց, — անհամբեր պոռթ-
կաց Արտոն:

Հասանը մտածում եր:

Ել փչ մի կասկած, վոր խոսում են իսկական մար-
դիկ: Սրանք չարքեր չեն, չարքերը չեն տանջվի արնա-
թաթախ յերեխաների համար... Չեն գնա իսպանացիներին
ոգնության: Այդ բարի մարդիկ մեկ չեն. խոսում են ձալ-
երով և աղջիկ են և սողա, անպայման մանուկ:

Այստեղ նրա միտքը խճճվեց:

Մանուկները չեն գնա պատերազմ, մեծերը չեն տե-
ղավորվի արևիկների մեջ. ի՞նչպես լուծել հանելուկը:

— Դուք, վոր այդպես գանգատվում եր, բա յես ի՞նչ
ասեմ... ձեզանից մեծ եմ, խցկվել եմ փոքրիկ արևիկի մեջ:
Թմրել ե վողջ մարմինս, — ձայնեց Արտոն, — ու մեկ ել...
մեկ ել ինչ Բաթումիում հաց եմ կերել...

— Վախ, վախ, խեղճ բալիկ, — մղկտաց Հասանը:

— Եզուց կհասնենք Ստամբուլ ու վերջ բոլոր չարչա-
րանքներին, — ասաց Դուրսուներ, — այդպես չի Գուրգեն:

Պատասխան չեղավ:

— Ձեռ լսում:

Ելի լուսթյուն:

— Գուրգեն, ինչո՞ւ ձայն չես հանում,— այս անգամ հարցրին բոլոր ընկերները,— ականջներդ բամբակ ես խրել: Վոչ մի պատասխան:

— Այսպես ել խոր քնում... Ձլինի՛ թե ծովն են գցել մեր Գուրգենին, սարսափած նկատեց Շուշիկը:

— Գուրգեն...

— Ա՛յ, Գուրգեն...

Չկա՛ր:

Մի շարք արկղների հետ ծովն ելին նետել նրան...

Աղվիկները լաց յեղան... Տղաները դժվարությամբ դապեցին արցունքները: Ու նրանց թվաց, թե արկղներն ավելի փոքրացան, սեղմվեցին ու ել ող չմնաց շնչելու:

— Յես առաջարկում եմ Գուրգենի հիշատակն անմահացնելու համար ավելի կատաղի կռվել ֆաշիստների դեմ,— նկատեց Արտոն:

— Կռվենք,— արձագանքեցին ընկերները:

Հասանը և լսում եր, և մտածում, ի՞նչ անել... Տեղեկացնել նավապետին, վոր տաճկական նավով Ստամբուլ են գնում խորհրդային յերեխաներ... Նա պարտավոր է մատնել նրանց,— այլապես, յեթե գաղտնիքը բացվեր, իրեն պատասխանատվության կենթարկեյին, կհեռացնեյին աշխատանքից, մինչդեռ տանը մայր, կին, յերեխաներ...

Նա դողդողալով կանգնեց, և այն ժամանակ նրա ուշադրությունը գրավեց մի նոր խոսակցություն:

— Այս նավի վրա մի քեռի կա, անունը Հասան. շատ լավ քեռի յե, ծեր ու բարի: Նավապետը ծեծել եր նրան, խեղճն այնպես տխուր եր... պատմեց Դուրսունը:

— Ախ ինչպե՞ս, ինչպե՞ս կարելի յե մարդ ծեծել, — հուզվեցին ընկերները:

— Յես առաջարկում եմ յուրաջ Հասանին վերցնել մեզ հետ, պաշտպանել նրան,— ասաց Շուշիկը:

— Սիրելի՛ խորհրդային բալիկներ,— շնչաց Հասանը: Ամբողջ կյանքում դեռ վոչ վոք նրան չեր խղճացել:

— Յուրաջ Հասանն այնպես դեղնած ե, յերեմում ե, վոր ապրուստը վատ ե,— շարունակեց Դուրսունը,— յերբ հասնենք Ստամբուլ, փող վաստակենք, նրան տանք:

— Անպայման,— համաձայնվեցին ընկերները:

Հասանը և ժպտում եր հրճվանքից և մտածում զարմացած: Այս ի՞նչ տեսակ հրաշք ե. արկղներում մեխված յերեխաներն ի՞նչպես իմացան, վոր նավապետը ծեծել ե նրան... Այն ժամանակ միայն շունն եր ներկա, բայց շունը հո լեզու չունէր, վոր գնար ուրիշներին պատմեր:

— Դուրսուն,— հարցրեց Սոսիկոն,— քեզ նավի վրա իսկի տեսնող չի յեղել:

— Շա՛տ...

— Բա ի՞նչպես քեզ չեն բռնում,— զարմացան ընկերները:

— Վորովհետեւ կարծում են, վոր յես... վոր յես... թոթովեց Դուրսունը. Հասանին նկատելով:

— Վոր դու ի՞նչ:

— Սըր՛ըստ...

Շունը զարթնեց, ծուլ-ծուլ ձգվեց, փնգստալով մոտեցավ Հասանին: Հասանը շոյեց նրա բբդոտ մազերը, կռացավ արկղների վրա:

— Շնորհակալ եմ, բալիկներ, վոր այդպես սիրում եք ինձ, բայց ասացեք խնդրեմ, ինչպե՞ս եք կարողանում փակ արկղներից տեսնել ինձ:

Պատասխան չեղավ:

— Ինչո՞ւ չեք պատասխանում, չե՞ վոր յես լսեցի ձեր զրույցը:

— Ի՞նչպես թե լսեցիր մեր զրույցը— բարկացավ Շուշիկը,— մենք նարինջ ենք, նարինջները չեն խոսում...

— Իհարկե չեն խոսում,— հաստատեց Չլֆեն:

— Միք վախենա, ձեզ չեմ մատնի,— հավատացրեց

Հասանը, — դուք վոր ինձ այդպես պաշտպանում եք, լավ բալիկներ եք: Քանի հոգի յեք:

Յերեխաները դեռ գծվարանում եյին հրաժարվել նա-
րինջությունից: Ո՞վ գիտե, գուցե Հասանը դիտմամբ ե այդ-
պես քաղցը անուշ խոսում, վոր հետո յեւ գնա քաղցը-ա-
նուշ մատնի:

Ներս մտավ մի նավաստի:

— Նավապետը կանչում ե, — հաղորդեց նա կարճ:

Հասանը գծգոհ դուրս յեկավ:

Շուներ հետեւեց նրան:

Ծովի վրա փռվել եր թանձր մշուշ:

Տխուր եր....

ՅՆՑՈՂ ՇԵՌԱԳԻՐ

— Պատիվ ունեմ ներկայանալու, — անհամարձակ ձայ-
նեց Հասանը:

— Հը՞, եւ չէ՞ն խոսում նարինջները, — հարցրեց նա-
վապետը:

— Նարինջն եւ խոսի, նավապետ, — պատասխանեց
Հասանը:

Նա ամեն ճիգ գործ եր գնում, բերանից խոսք չբխուց-
նելու համար...

— Հապա ի՞նչպես քիչ առաջ հայտնեցիր, վոր խո-
սում են նարինջները:

— Չեմ հիշում... ճիշտն ասած, չեմ հիշում, — թոթո-
վեց Հասանը, — յերբ ծովի վրա ուժեղ փոթորիկ ե բարձրա-
նում, խառնվում են իմ մաքերը... Լավ վոր դուք ասացիր,
վոր խելագար եմ... հայրս եւ եր խելագար...

Դուրսունը վտանգն արդեն անցած կարծելով, ուրախ
վազեց ընկերների մոտ:

Ծուղ-ըու-ղու:

Կը՛տ-կը՛տ-կը՛տ:

— Այս անգամն եւ ազատվեցինք:

— Ճիշտ:

— Ասում եյին, չէ՞. վոր լավ մարդ ե յողաշ Հասանը:
Մեկ եւ, ով սարսափ, աղմուկով բացվեց դուռը և նավա-
պետը նավաստիներին հետ ներս մտավ:

Արտոն անթարթ նայում էր սեղանի խորովածին և անխորժակով կուլ տալիս թուրք...

Քանի-քանի որ նա վռչինչ չեր կերել...

— Չե՛ս լսում,— գոռաց նավապետը,— յերկրորդ անգամ հարցն Արտոյին ուղղելով:

— Իհարկե նա չի լսում,— ոգնության հասավ Զլֆեն:

— Լսմ, հիմա յես այնպես կանեմ, վոր լսի, — սպառնաց նավապետը, մրրիկի պես առաջացավ, ապտակեց աղաներին, քաջքեց աղջիկների մազերից ու գոռաց.

— Այժմ լսեցի՛— ի՛— ի՛ք...

Յերեխաները լաց չեղան: Այդ հանգամանքն ավելի բորբոքեց նավապետին:

— Վերջին անգամ եմ հարցնում. ի՛նչ նպատակով եյիք պահվել արկղների մեջ: Յեթե չասեք, ծովը դցել կտամ բոլորիդ:

— Ի՛նչ կլինի նավապետ, թող մենք ել ճաշենք,— պատասխանի փոխարեն խնդրեց Արտոն և մոտեցավ սեղանին:

Դեռ կուլ չեր տվել առաջին պատառը, յերբ ներս վազեցին նավաստիները. յերեխաներին հրելով տարան մի մութ խուց, գուռը կողպեցին:

Կես գիշերին մեկը կամացուկ բացեց դուռը, մոտեցավ հատակին քնած յերեխաներին, ինչ վոր դրեց նրանց մոտ, արագ հեռացավ...

Հասանն եր, յողբաշ Հասանը: Նա յերեխաներին տվեց իր հացը ու ինքը մնաց քաղցած...

— Յես մեծ եմ, կգլխմանամ, մեղք եմ խորհրդային բալիկները,— ջերմ շշնջաց նա:

Յերեխաները սարսափած վեր թռան:

Գր՛ռ, գր՛ռ, գր՛ռ...

— Այդ ո՛ւմ սպանեցին:

Բո՛ււմ...

— Այդ ո՛ւմ դցեցին ծովը:

— Յողբաշ Հասանին... Յողբաշ Հասանին...

Ուրբաթ եր:

Մտամբուլի բուլվարներում, պարտեզներում զբոսնում եր հասարակությունը:

Լրագրավաճառ յերեխաները կանչում եյին:

— Յնցիչ հեռագիր, նորություն: Տաճկական շոգենավի վրա բռնված են խորհրդային լրտեսներ:

— Մանչուկ հոս յեկուր:

— Նախ ինձ տուր:

Ու ձեռքե-ձեռք խլխլում եյին որաթերթերը:

«Այսոր, բեռնակիր «Տ» տաճկական նավով Պոլիս կհասնեն խորհրդային լրտեսներ: Անոնք Բաթումեն նավ մտած են, պահված նարիջներու արկղներու և շան մորթու մեջ»:

— Ի՛նչպես թե շան մորթու,— զարմացած բացականչում եյին ընթերցողներն ու ավելի հափշտակված շարունակում:

«Լրտեսներ են, յերկուսն աղջիկ են: Անոնք զինված եյին դաշ ու յնով»:

Յեթե աղջիկները դաշույնով են զինված, յերեւակայեռու յե, թե մանչերը հետներուն ինչ վերցրած կըլլան,— և զրակացնում եյին ընթերցողները:

— Անշուշտ տեուրի յեն յեկած:

— Յերթանք նավահանգիստ:

— Վազե՛նք...

Յերբ բազմությունը հեվ ի հեվ հասավ, ծովի վրա արդեն յերևում եր բեռնակիր նավը:

Այդ համեստ, հնամաշ նավը դեռ յերբեք այդպիսի ընդունելության չեր արժանացել:

Բոպեն տարի յեր թվում:

Յերբ վերջապես նավը խարխիս զցեց, իսկույն մեջտեղ յեկան վոստիկանները, շղթա կազմեցին, մի քանիսն ատրճանակները պատրաստ բռնած նավ յեկան, խորհրդային լրտեսներին ընդունելու:

Ամբոխն սկսասում եր սրտատրոփ, ամեն մեկն աշխատում եր առաջին շարքում տեղ զբավել, ավելի լավ տեսնելու համար:

— Ի՞նչնում են, ի՞նչնում... —

Աշխուժացած հանդիսականները բարձրացան վոստների ծայրերի վրա... և հիասթափված յետ-յետ քաշվեցին:

Տաս վոստիկանների ուղեկցությամբ նավից իջան հինգ յերեխա գզգզված, անվա: Դուրսունը բռնել եր շան մորթին. Արտոն կրծում եր հաց:

— Քեռի, ես ի՞նչ միտինգ ե,— հարցրեց Շուշիկը, բազմությունը ցույց տալով:

— Լո՛ւր,— սաստեց վոստիկանը:

Կարմիր քույրիկը վերավորված կախեց շրթունքները, նայողները այդ տեսնելով, քրքշացին:

— Դուրսուն, յերեխ քո շան մորթու վրա յեն ծիծաղում,— ասաց Ջլֆեն,— թե չե, մե՞ք հո պոչավոր չենք, վոր...

— Չխոսել,— խորխտ նկատեց վոստիկանը:

Յերբ կալանավորները քաղաք մտան, մեծերը «Յնցիչ հեռագրից» չբավարարված յետ մնացին, փոխարենը յերեխաներին հետևեցին մանուկները:

Դուրսունը մեկ քայլում եր, մեկ ել դեռ իրեն շան մորթու մեջ կարծելով, բարձրաձայն հաջում...

Փոքրիկները քրքշում էյին հրճվանքից:

— Հաֆ, հաֆ-հաֆ-հաֆ...

— Չհաջել,— բարկացավ վոստիկանը:

— Ես ի՞նչ զարմանալի յերկիր ե,— վրդովեցին մեր հերոսները,— վոչ կարելի յե խոսել, վոչ հաջել...

— Չբողոքել,— գոռաց վոստիկանը:

— Ի՞նչ ե, ինքնադատության չեք դիմանում,— հեզ-նեց Արտոն:

Նրանց կանգնեցրին փոքր պատուհաններով մեծ տան մոտ:

Բացվեցին յերկաթյա դռները: Նրանց մտցրին ներս ու իսկույն փակեցին:

Ապա բացվեցին ելի դռներ: Նրանց ելի մտցրին ներս ու դարձյալ փակեցին:

Յերրորդ անգամ բացվեցին դռները, այս անգամ նեղ-լիկ ու ցած:

Յերեխաներին մտցրին ներս, վոստներին շղթա հազցրին: Ծածկեցին դուռը, յերեք անգամ պտտացրին բանալին: Խուցը մութն եր, թաց:

Կալանավորները շոշափելով գտան իրար, նստեցին հատակին:

— Սա բանտ ե,— ասաց Արտոն, ծանր լուսթյունը խղելու համար:

— Գերեզման ե,— հակառակեց Սոսիկոն:

— Շըփ-շըփ-շըփ-շըփ...

— Սը՛ սոս... ես ի՞նչ ձայն ե,— վախեցած ընդհատեց Ջլֆեն:

Միջանցքով անցնում էյին կալանավորները: Նրանց տանում էյին հարցաքննության: Վոստների ծանր շղթաները խանգարում էյին քայլելու... Նրանք քաղցած էյին, ուժասպառ: Յետ մնացողներին վոստիկանները հրում էյին հրացանի կոթով:

Նրանցից մեկը՝ Ալին յերեբաց, ընկավ:

Բուշիկ եր նա: Նրան բռնել էյին գործարանում հե-

դաժնալիկան թերթիկներ բաժանելիս: Հինգերորդ տարին եր տառապում բանտում: Ծանր պատիժներով փորձել էյին իմանալ կոմունիստ ընկերների անունները: Հացի փոխարեն կերակրել էյին մտրակով: Շիկացած շամփուրներով դա-
ղել էյին մարմինը:

— Հիմա անպայման կմասնի,— մտածել էյին:

Ալին նորից եր լուել...

Նրան զցել էյին ներքնահարկ ու ներս մոցրել տաս-
նյակ առնետներ: Նրանք բանտում ծառայում էյին, վորպես
պատժի միջոց: Նրանց որերով պահում էյին քաղցած, ապա
թողնում կապված կալանավորի վրա: Խոշոր մկները սովից
գազազած բզկտում էյին իրենց զոհին:

— Այս անգամ կբանա շրթունքները,— մտածել էյին:

Ալին դարձյալ չեր խոսել:

Բանտապետն ստիպված խլել եր նրան առնետների
ձանկերից, վոր չմահանար: Յեթե մեռներ Ալին, ել հնա-
րավոր չեր լինի իմանալ մյուս կոմունիստների անունները:

Իսկ չերեկ... Յերեկ նրա վոտների տակ խարույկ էյին
վառել... Բոցը խորովել եր նրա միսը...

— Դեհ, հիմի տեսնենք, ինչպես չես ասի,— հռհու-
ցել էյին:

Ալին համառ լուռթյուն եր պահպանել:

— Յես չգիտեմ, թե ել ի՞նչ միջոցների դիմեմ,— գի-
նաթափվել եր բանտապետը,— զարմանալի նյութից են բաղ-
կացած բոլշևիկները, նրանց չի սարսափեցնում վոչ մի
պատիժ...

Յեվ այսոր Ալուն դարձյալ տանում էյին հարցաքն-
նության: Նա չեր կարողանում քայլել... Վերքի մրմուռից
ուշաթափվում եր: Մթնեցին աչքերը, յերերաց: Չընկնելու
համար բռնեց պատից, բայց ընկավ... Ուղեցին բարձրաց-
նել, փայտացած մարմինը չծալվեց...

Մեռել եր Ալին, բանվորների բարեկամը...

Միջանցքում տիրեց իրարանցում: Յերեխաները, դրսի
ձայները խլացնելու համար, յերգեցին «Ինտերնացիոնալ»:

Դուռը բացվեց, յերեաց սարսափելի մի կերպարանք:

— Լուել,— հրամայեց նա:

— Մենք մեզ համար ենք յերգում,— ասաց Շուշիկը:

— Լուե-ե-ե-ե...

Նրանք լուեցին: Սոսիկոն կամաց շշնջաց:


— Սա անպայման ֆաշիստ ե, միայն ֆաշիստը կա-
րող ե այդպիսի ահուելի տեսք ունենալ...

— Յես համոզված եմ, վոր սրանք մեզ կենդանի չեն
թողնի,— հառաչեց Դուրսունը:

— Ո՞վ գիտե, այսոր Իսպանիայում ումքն ելի քանի
յերեխա, քանի հայր, մայր, ե սպանել,— գիտամամբ խոսակ-
ցության նյութը փոխեց Արտոն:

— Հարկավոր ե այստեղից փախչելու ե Իսպանիա
հասնելու հնար գտնել,— ձայնեց Սոսիկոն,— ձեզանից
ո՞վ խելոք առաջարկ ունի:

Յերեխաներն իսկույն սկսեցին մտածել: Նրանք մո-
ռացան և՛ բանտը և՛ մահվան սարսափը:



ԲԱՅՑ ԱՓՍՈՍ ՎՈՐ ՅԵՐԱԶ ԵՐ

Հաջորդ որը նրանց տա-
րան հարցաքննության:

Սեղանի մոտ նստել
եյին մարդիկ, կապած
սուր, թուր, հրացան:

Արտոն բոլորի կողմից
հայտարարեց:

— Ձեր հարցերին
չենք պատասխանի: Մենք

խորհրդային հպատակ ենք, միայն խորհրդային ներկայա-
ցուցիչն իրավունք ունի մեր գործը քննելու:

— Վճրատեղից գիտեք այդ որենքը, — զարմացավ բան-
տապետը:

— Դպրոցում ենք սովորել:

— Ախ, ձեր այդ դպրոցը, — մոմռաց նա:

— Ի՞նչ է, ձեզ դուր չի՞ գալիս, — հեգնեցին յերեսաները:

— Մեր հասարակագիտության ուսուցիչն այնպես լավն
է, վոր... պաշտպանեց Շուշիկը:

Զթողին, վոր շարունակեք... Քննիչը զայրացած ձեռքը
խփեց սեղանին ու գոռաց.

— Լռեցնել այդ աղջկան, թե չէ...

— Թե չէ, ինձ կսպանի, — մտածեց Շուշիկը:

Զանցած մի ժամ, նրանք արդեն գտնվում էին խոր-
հրդային ներկայացուցչի մոտ:

Ընկեր կուզնեցովը մեկ էր հարցնում, յերեսաները
տասն էին պատասխանում: Խոսում էին իրար ընդհա-

տելով, ամեն ինչի մասին մանրամասն:

— Ձեզ վոր տեսա, կարծես հայրիկին տեսա, — ու-
րախտությունից թոթովում էր Շուշիկը, — դուք այնպես
լավ եք:

Արտոն աշխատում էր լուրջ մնալ, չէ՞ վոր ամբողջ
խմբի մեծն էր նա...

— Քաղցած չե՞ք, — հարցրեց ընկեր կուզնեցովը:

— Մոտավորապես, — պատասխանեցին նրանք:

Խորհրդային ներկայացուցիչը սեղմեց կոճակը, պատ-
վիրեց թեյ ու նախաճաշ բերել:

Յերեսաները կերան, խմեցին և ավելի համարձակ
շարունակեցին զրույցը:

Ընկեր կուզնեցովը լսում էր մեծ ուշադրությամբ:
Ժպտում էլին նրա կապույտ աչքերը: Մանուկների հետ
մանկացած քրքշում էր հրձվանքով:

— Հապա... մեր թիվը հասավ հիսունհինգի, բայց թերթ
միլիցիոներները Բաթումում շրջապատեցին մեզ, կորցրինք
իրար, — բացատրեց Սոսիկոն:

— Քանի՞ հոգու, — հարցրեց ընկեր կուզնեցովը, կար-
ծես լսողության վրա կասկածելով:

— Հիսունհինգի, — հիսունհինգի, — միաբերան պատաս-
խանեցին յերեսաները:

— Չասեք ամբողջ մի բանակ... Իսկ ո՞վ էր ձեր հրա-
մանատարը:

Յերեսաներն իսկույն մատնանշեցին Արտոյին:

Արտոն զսպելով ներքին բերկրանքը, աշխատեց
սառնասիրտ յերեվալ:

— Այժմ իմ սակավաթիվ բանակի անունից խնդրում
եմ ոգնել մեզ Իսպանիա հասնելու, — մենք այստեղ յերկար
մնալու տրամադրություն չունենք. ժամանակը թանգ է
մեզ համար:

— Ճիշտ է, — հաստատեցին ձայները:

Ընկեր Կուզնեցովը պատասխանեց.

— Խոստանում եմ բոլորիդ համար տոմսակ գնել:

Յերեխաներն ուրախությունից շրջապատեցին նրան:

— Ձեզ ապահովել ուտելիքով, փողով:

Յերեխաներն ուրախությունից զրկեցին նրան: Արտոն մինչև անգամ համբուրեց ընկեր Կուզնեցովին:

— Յեվ, — շարունակեց ընկեր Կուզնեցովը

— Ի՞նչ և, ի՞նչ և, ընդհատեցին յերեխաները:

— Յեվ դուք կմեկնեք գեպի... յետ:

Յերեխաները շումած բացականչեցին:

— Ի՞նչպես թե:

— Առաջ գնալ չի կարելի, — հանդիստ նկատեց ներկայացուցիչը: Խորհրդային իշխանությունը չի խառնվում ուրիշ պետությունների գործին:

Յերեխաները գիշերային ծաղիկների նման գլուխները կախեցին:

— Դուք գեռ փոքրիկ եք, իմ բալիկներ, յերբ մեծանաք, յես ձեզ կնվիրեմ Կլիմ Վորոշկովին: Կըդառնաք կարմիր բանակային, կպաշտպանեք խորհրդային հայրենիքը, իսկ հիմա վերդաարձեք և շարունակեցեք ձեր ուսումը, — ապա ընկեր Կուզնեցովը:

Դուրսունն ու Սոսիկոն կարծես համաձայնվեցին, բայց կարմիր քուլրիկները տխրեցին:

— Մեզ ի՞նչ, աղջիկներին բանակ հո չեն տանում փոր ուրախանաք, — անբավարար հառաչեց Զլֆեն:

— Չտանեն ել, դուռով կգնանք, — խրախուսեց Շուշիկը. — Չապաեի մոտ գնդացրի վրա կին եր աշխատում...:

Արտոն չեր խոսում: Չափազանց մոռյլ եր:

Ինչպիսի գովարությամբ նրանք հասան Ստամբուլ. Կորցրին սիրելի Դուրգենին, իրենց պատճառով սպանեցին, ծով գցեցին յուրաշ Հասանին... Նրա վեց յերեխաները հիմա

կանչում են հայրիկ, հայրիկ, մի կտոր հաց... Բայց հայրիկն ել չկա... Լաց են լինում մայրն ու կինը...

Իսպանացի մանուկները պարզել են իրենց թաթիկները.

— Արտո ջան, Արտո, շուտ հասեք, փրկեցեք մեզ, — աղաչում են: — Փաշխաները ուումբ են նետում, գազ են բաց թողնում, խեղդում են մեզ...

Արտոն ուզում եր շուտ հասնել այնտեղ, մինչդեռ... մինչդեռ ասում են՝ դարձեք յետ...

Նա չկարողացավ զսպել վիշտը, գլուխը դրեց սեղանին և դառնացած հեկեկաց...

Հայրը քնաթաթախ վեր թռավ:

— Այս ո՞վ ե լալիս, — զարմացավ նա:

Արտոն կծկվել եր մահճակալի տակ, կրծքին ամուր սեղմել հոր ատրճանակը, արտասվում եր յերազի մեջ...

— Բալիկ, զարթնիր, զարթնիր, վեր, — ձայն տվեց հայրը:

Տղան մեծ գովարությամբ բացեց աչքերը, շփոված նայեց շուրջը, բայց նորից քունը տարավ:

— Ընկեր Կուզնեցով, խնդրում եմ, իմ սակավաթիվ բանակի կողմից, աղաչում եմ, թույլ տվեք, ոգնեցեք մեզ առաջ գնալու:

— Այդ ո՞ւր ես ուզում գնալ... են ել գինված... — ծիծաղեց հայրը:

— Իսպանացիք մեզ են սպասում, լսում եք, ընկեր Կուզնեցով, — գեռ խոսում եր Արտոն, — հարկավոր ե ջախջախել խռովարարներին:

— Ահա թե ի՞նչ... — բացականչեց հայրը, հիշեց, թե ինչպես գիշերը մի բան զընգալով ընկավ հատակին: Չայնի վրա նա թեև վեր թռավ, սակայն քունը գլխին փչինչ չկարողացավ հասկանալ: Այդ այն րոպեն եր, յերբ Արտոն անդգուշությամբ վայր գցեց ատրճանակը և վախից պահվեց

մանձակալի տակ, վորոշեց ատրճանակի փոխարեն պատվի
դաշույնը վերցնել:

— Անպայման սպասել ե, վոր քնեմ, հետո փախչի,
մինչդեռ քունը տարել ե, մնացել... — Մտածեց հայրը, գը-
լուխը թափահարելով:

Դուռը կամացուկ բացվեց: Շեմքի վրա յերևացին
Գուրգենն ու Շուշիկը: Նրանք և բարկացած էյին, վոր
Արտոն մինչև լույս նրանց սպասեցրել էր, չէր յեկել, և
վախենում էյին, վոր Արտոն գուցե առանց նրանց եր ճա-
նապարհ ընկել:

— Արտոն տա՛մնն ե, — հարցրին նրանք անհամարձակ:

— Քնած ե:

Ընկերներն իսկույն նայեցին մանձակալին, բայց հայ-
րը ցույց տվեց մանձակալի տակը:

— Եխ, դժու-ու, — հիասթափված ծիծաղեցին ընկերները:

Ձայնի վրա զարթնեց Արտոն, — զարմանքից ճշաց: Նա
լաց ե լինում մեռած Գուրգենի համար, մինչդեռ Գուր-
գենը կանգնել ե գլխավերեվը, ծիծաղում ե:

Յերևույթ, բայց վո՛րն ե յերազր, այն, վոր ընկերոջն ար-
կղի հետ ծով նեղեցին, թե՛ այն, վոր...

Սթափվելու համար նա տրորեց աչքերը, վտռի յելավ:

— Ինչ լավ, վոր դու կենդանի յես, — բացականչեց
նա Գուրգենին գրկելով: — Սակայն ուր ե սիրելի Դուր-
սունը, Զլֆեն... Ու՛ր ե յուզաշ Հասանը...

Յեվ Արտոն մանրամասն պատմեց յերազր:

Ընկերները լարված ուշադրությամբ լսեցին նրան:
Հայրն ասաց:

— Ճիշտ ե ասել ընկեր Կուզնեցովը, յերբ մեծանաք,
ձեզ կնվիրենք Կլիմ Վորոշիլովին, վոր պաշտպանեք մեր
սոցիալիստական հայրենիքը, իսկ հիմա գնացեք դպրոց:
Ժամի ութից տաս րոպե յե պակաս:

Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գապարյան
Մրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Կլավիտի լիազոր՝ Վ.—2033. Հրատ. № 4791

Պատվեր 58 Տիրաժ. 3000


Թուղթ 62X94 Տպագր. 4 մամ.

Մեկ մամ. 24480. Նշան.

Հանձնված ե արտադրության 11 հունվ. 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար 7 հուն. 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0396277

4120 10.80 4.

203

8650

~~28~~

907

1
1